«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ԵՕՀՊՄՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ԵՕՀՊՄՔ ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է ԵՕՀՊՄՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 20
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 43
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 51
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 54
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 57
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 61
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 68
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 69

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը» պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն իրականացնում է հանրակրթական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: ԵՕՀՊՄՔ-ն իր առաքելությունն է համարում «Պատրաստել մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով զինված, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարձրակարգ և մրցունակ մասնագետներ՝ մարզիչներ»: ՄՈՒՀ-ը պատրաստում է օլիմպիական ռեզերվի մարզիկներ և տրամադրում է մարզական բարձր արդյուքներ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ՝ արտերկրում, այն իր ուղղվածությամբ եզակի է սպորտի ոլորտում: ԵՕՀՊՄՔ-ն կարևորում է մարզական արդյունքների ապահովմանը զուգահեռ բարձրակարգ մարզիչների ձևավորումը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև այն հանգամանքը, քոլեջն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթացը:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում վերջին երեք տարիներին իրականացվում են ակնառու բարեփոխումներ, որոնք հատկապես նկատելի են ղեկավար անձնակազմի փոփոխությանը զուգահեռ: Քոլեջում իրականացվում են ենթակառուցվածքների հիմնանորոգում և վերազինում: Կառավարման գործընթացները կանոնակարգվում են և ներդրվում են ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

Քոլեջն առաջին անգամ մշակել և ներդրել է Ռազմավարական ծրագիր, սահմանել է նպատակներ և դրանց իրականացման պլան-ժամանակացույց, այնուամենայնիվ դեռևս պլանավորումը և հաշվետվողականությունը լիովին չեն արտահայտում ՌԾ խնդիրները և սահմանված գնահատման արդյունավետության ցուցիչները: Պետք է նաև նշել, որ պլան-ժամանակացույցում սահմանված ակնկալվող արդյունքները ոչ միշտ են ցույց տալիս իրականացվող գործողությունների արդյունավետությունը:

Նկատելի են քոլեջի կողմից կատարված քայլերն՝ ուղղված ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացների ապակենտրոնացմանը: Քոլեջում հստակեցվել և տարանջատվել են աշխատակիցների գործառույթները, ինչպես նաև ներդրվել են նոր հաստիքներ: Կառավարման համակարգը կանոնակարգելու, իսկ իրականացվող գործընթացներն ինստիտուցիոնալացնելու նպատակով ներդրվել են մի շարք կանոնակարգեր, սակայն դրանք դեռևս լիարժեք կիրառություն չեն ստացել:

Քոլեջն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն

փորձագիտական խումբն իր մտահոգությունն է հայտնում առ այն, որ ՈԱ քաղաքականությունում արտացոլված սկզբունքները և մոտեցումները չեն վերածվել հստակ գործընթացերի, իսկ ՊԻԳԲ շրջափուլը լիարժեք ներդրված չէ:

ԵՕՀՊՄՔ-ում իրականացվում է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագիրը, որն այս պահին իր մեջ ներառում 13 սպորտաձև: Կրթությունը կազմակերպվում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում՝ շնորհելով «մարզիչ» որակավորումը Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ ՈԱՇ) համապատասխան: Կրթությունը կազմակերպվում է առկա ուսուցմամբ հիմնական կրթության հիմքով (չորս տարի) և միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով (երեք տարի), ներկա փուլում քոլեջում իրականացվում է միայն 4-ամյա կրթությունը: Փորձագիտական խմբի համար նկատելի են քոլեջի ջանքերը «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտական ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որի նպատակով կրթական ծրագիրն աստիճանաբար բարելավվել է պետական կրթական չափորոշիչներին համահունչ: Կրթական ծրագրում կատարված փոփոխությունների արդյունքում ավելացվել է գործնական ժամերի տեսակարար կշիռը:

Քոլեջն իր ծավալած գործունեության և կրթական ծրագրերի իրականացման համար ունի բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Քոլեջում դասավանդում են պրակտիկ փորձ ունեցող մարզիչներ, որոնք ապահովում են գործնական կարողությունների զարգացումը ուսանողների մոտ: ՄՈՒՀ-ն իր 2021-2026թթ. ՌԾ-ում որպես զարգացման գերակա ուղղություն կարևորել է նաև ուսումնառության, մարզումների համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումն ու համապատասխան նյութատեխնիկական բազայի արդիականացումը: Ակնառու են քոլեջի ջանքերը ռեսուրսների բարելավման և արդիականացման ուղղությամբ, գործում են ֆինանսական ռեսուրսների բաշխման և վերահսկման որոշակի մեխանիզմներ, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնամարզական գործընթացի կազմակերպման համար:

Հետազոտական ոլորտում մտահոգիչ է քոլեջի հավակնություններն արտահայտող հստակ իրագործելի ռազմավարության բացակայությունը: Հետազոտական հանձնարարականների սակավ լինելը թույլ չեն տալիս ուսանողների մոտ լիարժեքորեն ձևավորել վերլուծական, քննադատական մտածողություն, ինչպես նաև մղել ինքնուրույն ուսումնասիրությունների:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ: Ուսանողական ծառայությունների բարելավումը և ուսանողական հանրակացարանի կառուցումը հանգեցրել են քոլեջի դիմորդների աճին:

Քոլեջն ունի ներքին ու արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման որոշակիորեն ձևավորված համակարգ: Առկա են հետադարձ կապի մեխանիզմներ, շարունակաբար իրականացնում է միջոցառումներ՝ միտված հասարակությանը գիտելիքների ու արժեքների փոխանցմանը: Այդուհանդերձ, առանձին գործընթացները կատարելագործելու անհրաժեշտություն ունեն, մասնավորաբար՝ միտված հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի զարգացմանը, հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը և այլն:

ՄՈՒՀ-ն ունի գործընկերային հարաբերությունների ընդգրկուն ցանկ, ինչը բավարար է կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքներն իրացնելու համար, մասնավորապես՝ ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպման համար:Հատկանշական է նաև, որ գործընկերային հարաբերությունները նպաստում են ռեսուրսների համատեղ կիրառմանը:

ԵՕՀՊՄՔ-ն կարևորում է օտար լեզուների կատարելագործմանն ուղղված քայլերը, այդուհանդերձ դրանք ևս կանոնակարգված չեն: ՄՈՒՀ-ն իր լիարժեք միջազգայնացման գործընթացը հապաղող գործոնների շարքում տեսնում է ռեսուրսային բազային ամբողջական վերազինման խնդիրը, որի լուծման արդյունքում միջազգայնացումը կարող է լիարժեք ընթացք ստանալ: Միջազգայնացման հիմնական հնարավորությունները քոլեջի կողմից դիտարկվում են միայն մարզական ոլորտում:

Այսպիսով, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջը կարևորում է իր երկարաժամկետ զարգացումը՝ անընդհատ կատարելագործելով իր ռեսուրսային բազան, օգտագործելով դասախոսական կազմի ներուժն ու մարզիչների փորձը և հմտությունները, քայլեր է կատարել հաշվետվողականության, հասարակական պատասխանատվության ուղղություններով, կարևորում է ուսանողներին աջակցելու գործընթացները, ստեղծել է որոշ նախադրյալներ արտաքին կապերի հաստատման ուղղությամբ, սակայն հետազոտության և որակի ապահովման ձեռքբերումները դեռևս բավարար երաշխիքներ չեն ստեղծել երկարաժամկետ զարգացման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Առաքելության հստակ պատկերացումը և եզակի ուղղվածությունը սպորտի ոլորտում,
2. Կառավարման համակարգում կոլեգիալության սկզբունքների գործածումը,
3. Քոլեջի տնօրենի՝ շահակիցների կողմից որպես առաջնորդի ընկալումը,
4. ՄԿԾ-ի և ռազմավարական հիմնական նպատակների համահունչությունը ՈԱՇ-ին,
5. ՄԿԾ-ի իրականացման համար համապատասխան դասախոսական կազմի և մարզիչների առկայությունը,
6. Մոտիվացված ու նվիրված ուսումնաօժանդակ և դասախոսական կազմը,
7. ՄԿԾ-ի իրականացման համար համապատասխան ենթակառուցվածքների ու համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսների առկայությունը և դրանց արդիականցման հնարավորությունը,
8. Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման և վերաբաշխման մեխանիզմների առկայությունը,
9. Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների առկայությունը,
10. Ուսանողների պրակտիկ կարողությունների և հմտությունների ձևավորման մեխանիզմերի առկայությունը,
11. Քոլեջի գործունեության թափանցիկության ու հասանելիության ապահովմանն ուղղված գործընթացները,
12. Գործընկերների ընդգրկուն ցանկ՝ որակյալ կրթություն ապահովելու և կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքներն իրացնելու համար:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՌԾ-ի կատարողականի մշտադիտարկման և գնահատման թույլ մեխանիզմները,
2. Քոլեջի հիմնական շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմների կիրառության անկատարությունը,
3. Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը,
4. Ռազմավարական պլանավորման և կարճաժամկետ պլանավորման կապի խզումը,
5. Որոշ հաստիքների համար աշխատանքային գեռծառնրաբեռվածությունը,
6. Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմների ոչ լիարժեքությունը,
7. Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի մեխանիզմների անկատարությունը,
8. Ուսանողների և դասախոսական կազմի՝ հետազոտական գործունեության ծավալման խրախուսման մեխանիզմների բացակայությունը,
9. Միջազգայնացման ուղղությամբ փորձի պակասը,
10. ՈԱ գործընթացների փաստաթղթային հենք, որոնք չեն վերածվել հստակ գործընթացների։
11. Անգլերեն լեզվի ոչ բավարար իմացությունը։

Հիմնական խորհրդատվություններ.
Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել ՌԾ-ի պլան-ժամանակացույցը՝ հստակեցնելով ժամկետները, ռեսուրսները և ակնկալվող արդյունքները։
2. Ապահովել ՌԾ-ի լիարժեք գնահատումը սահմանված պլան-ժամանակացույցին համապատասխան։
3. Բազմազանեցնել շահակիցների կարիքները վերհանող մեխանիզմները՝ ապահովելով նաև համապատասխան վերլուծություններ։

Կառավարումն ու վարչարարությունը

4. Ներդնել ստորաբաժանումների պլանավորման և հաշվետվողականության միասնական ձևաչափ՝ փոխկապակցելով ՌԾ-ին։
5. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկումը կառավարման բոլոր գործընթացներում՝ ներդնելով գնահատման և բարելավման համապատասխան գործիքակազմ։
6. Գնահատել աշխատակիցների բեռնվածության աստիճանը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով գործառույթների վերաբաշխում։

Մասնագիտության կրթական ծրագրերը

7. Բարելավել և ամբողջականացնել կրթական ծրագրի կառուցվածքը և

նկարագրությունը:

8. Բարելավել և արդիականացնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը՝ փոխկապակցելով կրթական ռեսուրսների և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման հետ:
9. Բազմազանեցնել ուսանողների մասնագիտական բանավոր խոսքի զարգացմանը ուղղված առաջադրանքները:
10. Բարելավել և հստակեցնել գնահատման ընթացակարգը՝ տարբերակելով գնահատման ձևերը և փոխկապակցելով դրանք կրթական վերջնարդյունքների հետ, ընդունելով միասնական մոտեցումներ:
11. Մշակել և ներդնել ավարտական աշխատանքների կատարման կանոնակարգ:
12. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվության և գրագողության բացառման կանոնակարգեր/քաղաքականություն:
13. Բարելավել և գործարկել կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման քաղաքականությունը:

Ուսանողները

14. Կանոնակարգել և բազմազանեցել ուսանողներին տրամադրվող լրացուցիչ պարապունքները:
15. Կանոնակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների անցկացումը:
16. Մշակել և ներդնել մեխանիզմներ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար՝ նպաստելով ուսանողների հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. վերամշակել և բարելավել դասախոսների մասնագիտական որակների ներկայացվող պահանջները, դրանք փոխկապակցելով ՄԿԾ վերջնարդյունքների հետ:
18. բարելավել և գործարկել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և վերապատրաստումների ընթացակարգերը՝ ներդնել կարիքների վեր հանման մեխանիզմներ, աջակցելով նրանց մասնագիտական որակների կատարելագործմանը:
19. մշակել և ներդնել դասախոսների և ՈւՕ կազմի խրախուսման ընթացակարգ(եր)՝ սահմանել օբյեկտիվ և հուսալի ցուցանիշներ նյութական և բարոյական խրախուսման միջոցների կիրառման համար:
20. մշակել և ներդնել վարչական և ՈւՕ կազմի աշխատանքների պարբերաբար գնահատման և մասնագիտական կոմպետենտության չափման մեխանիզմները, խրախուսել և աջակցել նրանց մասնագիտական որակների կատարելագործմանը:

Հետազոտությունը և զարգացումը

21. Հստակեցնել հետազոտության ոլորտում հավակնություններն ու ուղղությունները՝ դրանք փոխկապակցելով կրթական ծրագրին և աշխատաշուկայի պահանջներին:

22. Մշակել և ներդնել հետազոտական գործունեության քաղաքականություն և ընթացակարգեր՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի ռեսուրսները և առանձնահատկությունները։
23. Ներդնել և հստակեցնել ուսանողների վերլուծական, քննադատական, հետազոտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը նպաստող կրթական բաղադրիչը։
24. Մշակել և ներդնել ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ապահովելով հետազոտական բաղադրիչի լիարժեք ներդրումը։
25. Ներդնել խրախուսող մեխանիզմներ ուսանողական և դասախոսական կազմին ոլորտային հետազոտություններում ներգրավելու համար։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

26. Գնահատել քոլեջի ռեսուրսային բազան ու զարգացման հնարավորությունները՝ ներդնելով հստակ գործիքակազմ դրա պահպանման և արդիականացման համար։
27. Վերազինել գրադարանը, համալրել մասնագիտական գրականությունը՝ անդամակցելով անվճար գրադարանային ցանցերին, ինչպես նաև ստեղծել էլեկտրոնային գրադարան։
28. Ընդլայնել գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառման պրակտիկան՝ վերածելով այն ՄՈՒՀ-ի հստակ ռազմավարության։
29. Իրականացնել ֆինանսական այլընտրանքային աղբյուրների որոնում՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսական մուտքերը։
30. Թվայնացնել ներքին փաստաթղթաշրջանառությունը՝ ապահովելով դրանց հասանելիությունը և թափանցիկությունը։

Հասարակական պատասխանատվությունը

31. Բարելավել ներկայացվող հաշվետվությունների ձևաչափը՝ փոխկապակցելով ՌԾ-ին և դարձնելով առավել վերլուծական։
32. Զարգացնել հասարակությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի մեխանիզմները, բարելավել դրանք՝ պարբերաբար գնահատելով ձեռքբերված արդյունքները։
33. Վերականգնել ԵՕՀՊՄՔ-ի պաշտոնական կայքէջը՝ ապահովելով քոլեջի վերաբերյալ բազմալեզու տեղեկատվություն։
34. Բարելավել և գործարկել արտաքին և ներքին շահակիցների հետադարձ կապի ապահովման մեխանիզմները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

35. Մշակել ինստիտուցիոնալ մեխանիզմներ գործընկերային հարաբերությունների հաստատման և շարունակական զարգացման համար։
36. Կանոնակարգել և սահմանել միջազգային գործընկերներ ընտրելու մեթոդաբանությունը՝ հստակեցնելով գործընկերության պայմանները և կողմերի պարտավորությունները։

37. Բարելավել անգլերենի իմացության մակարդակը ուսանողների, դասախոսների, վարչական աշխատակիցների մոտ՝ մշակելով երկարաժամկետ դասընթացներ և անհրաժեշտության պարագայում գտնելով աջակից գործընկերներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

38. Գործարկել և գնահատել ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը՝ նպատակաուղղելով ՄՈՒՀ-ի առանձնահատկություններին:
39. Մշակել և ներդնել որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ միաժամանակ առաջնորդվելով առաջավոր փորձի լավագույն օրինակների ուսումնասիրմամբ և տեղայնացմամբ:
40. Ապահովել որակի ապահովման բաժնի աշխատակցի(ների) մասնագիտական հմտությունների զարգացումը՝ ուղղված որակի ապահովման գործընթացների իրականացմանը:
41. Ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, ձևավորել որակի ապահովման պատասխանատուների (աջակիցների) ցանց՝ ապահովելով տարբեր գործընթացների ՈԱ գնահատման արդյունքների հասանելիությունը:
42. Ընդլայնել տվյալների հավաքագրման մեխանիզմները, որոնք թույլ կտան վերհանել քոլեջում առկա մարտահրավերները և լավ փորձը բոլոր ոլորտներում:

Հովհաննես Երիցյան
Փորձագիտական խմբի ղեկավար

25 նոյեմբերի 2022թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից՝

1. **Հովհաննես Երիցյան՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Միջազգային բիզնես դպրոցի գործադիր տնօրեն, Հայաստանի եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնի դասախոս,
2. **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի դասախոս, Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի (ԳՄԲՎԴ) գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, միջազգային կարգի մրցավար,
3. **Գոհար Մուրադյան՝** Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի որակի ապահովման բաժնի ղեկավար,
4. **Էրիկ Գյոզալյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» բաժնի 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵՕՀՊՄՔ–ն 20.12.2018թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ԵՕՀՊՄՔ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Covid 19-ով և պատերազմով պայմանավորված գործընթացները ժամանակավորապես կասեցվել են: 2021թ. դեկտեմբերի 7-ից գործընթացները վերսկսվել են: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Ինքնավերլուծությունն իրականացրել է ԵՕՀՊՄՔ-ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն լեզվով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-

ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Առկա են եղել որոշակի տեխնիկական և բովանդակային թերություններ, ինչի պատճառով ինքնավերլուծությունը վերադարձվել է հաստատությանը: Այնուհետև սահմանված ժամկետներում ԵՕՀՊՄՔ-ն 11.04.2022թ -ին ներկայացրել է ինքնավերլուծության վերանայված տարբերակը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, մարզումների դիտարկում, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները, փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքները:

Նախանական այց

2022թ. օգոստոսի 31-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել ԵՕՀՊՄՔ-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ

համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. սեպտեմբերի 6-9-ն ընկած ժամանակահատվածում:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ, ռեսուրսների և մարզումների դիտարկումներ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 24.10.2022թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ ԵՕՀՊՄՔ-ն դիտարկումներ չի ներկայացրել: փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 25.11.2022թ.:

Անահիտ Տերտերյան
Համակարգող

25 նոյեմբերի 2022թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն.** 1971թ - -ի սեպտեմբերին ՀԽՍՀ լուսավորության նախարարության հրամանով Երևանի թ.10 միջնակարգ գիշերօթիկ դպրոցին տրվել է մարզական թեքում, և տարեցտարի դպրոցում ձևավորվել են օլիմպիական տարբեր մարզաձևերից խմբեր՝ համապատասխան մասնագիտությամբ մարզիչների ղեկավարությամբ՝ առաջնորդվելով կառավարության կողմից առաջադրված ծրագրերով և ուսումնական ու մարզական պլաններով: 1989թ - -ից մարզական թեքումով գիշերօթիկ միջնակարգ դպրոցը վերակազմավորվել է օլիմպիական հերթափոխի ուսումնարանի՝ կազմելով Խորհրդային Միության 15 հանրապետություններում և խոշոր քաղաքներում ՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Սվերդլովսկում և այլն, ստեղծված նմանատիպ մարզական 100 ուսումնարանների հետ մեկ ընդհանուր կրթական մարզօջախ՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գերատեսչությունների ենթակայությամբ՝ նպատակ ունենալով մասսայականացնել ֆիզիկական կուլտուրան և սպորտը և խթանել նրա զարգացումը, ինչպես նաև հանրության շրջանում տարածել օլիմպիական գաղափարները: ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի № 1009-ն որոշմամբ Երևանի օլիմպիական հերթափոխի ուսումնարանը վերակազմավորվել է՝ դառնալով պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) և քոլեջ:

2. **Կրթություն.** Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը սովորողների ուսուցման և մարզման գործընթացները կազմակերպում է հիմնական, միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և մարզական ծրագրեր իրականացնելու միջոցով: ՄՈՒՀ-ն ունի միջին մասնագիտական մեկ կրթական ծրագիր՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ»՝ շնորհելով «մարզիչ» որակավորումը: Մեկ կրթական ծրագրում ներկայումս ներառված է 13 մարզաձև՝ ազատ ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ծանրամարտ, բոնցքամարտ, ձյուդո-սամբո, ջրային ձևեր, հեծանվային սպորտ, ֆուտբոլ, սեղանի թենիս, Սպորտային մարմնամարզություն, ակրոբատիկա, գեղարվեստական մարմնամարզություն, սպորտային պարեր, աթլետիկա և բասկետբոլ: ԵՕՀՊՄՔ-ի դասախոսական, մարզչական և ուսումնաօժանդակ կազմի ուղղակի մասնակցությամբ պատրաստում է մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով զինված, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարձրակարգ և մրցունակ մարզիչներ:

ՄՈՒՀ-ում մարզիչները գնահատվում են հիմնականում ըստ մարզական նվաճումների ցուցանիշների:

Քոլեջը ձգտում է ապահովել ժամանակակից կրթության և սպորտի պահանջներին համապատասխան ենթակառույցներ և նյութատեխնիկական բազա, այդ նպատակով կառուցել և կահավորել է նոր հանրակացարանային համալիր, նպտակադրված է ստեղծելու և ավելացնելու նոր լսարաններ՝ տեխնիկապես հագեցված, հեռաուսուցման իրականացման հնարավորություններով (ինտերնետային կապով, համակարգչով, ցուցադրման թվային սարքով, ինտերակտիվ գրատախտակով և անհրաժեշտ այլ պարագաներով), պարբերաբար համալրել գրադարանային ֆոնդը, աշխատանքներ իրականացնել գրապահոցի արդիականացման ու թվայնացման ուղղությամբ և այլն:

3. Հետազոտություն. ԵՕՀՊՄՔ-ն կարևորում է իր կանոնադրական նպատակների շրջանակում հետազոտական գործունեություն ծավալելը և այդ նպատակով ձգտում է ուսումնառողների մոտ ձևավորել քննադատական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ: Քոլեջում մշակվում և իրականացվում են ստեղծագործական, հետազոտական աշխատանքներ՝ ռեֆերատներ, անհատական ինքնուրույն աշխատանքներ և այլն:

4. Միջազգայնացում. ԵՕՀՊՄՔ-ն ձգտում է զարգացնել իր միջազգայնացման ուղղությամբ տարվող աշխատանքները, ակտիվացնել փոխանակման ծրագրերը, համագործակցային հարաբերությունները: Գործընթացների արդյունավետության բարձրացման և կանոնակարգվածության նպատակով 2021թ.-ի հունվարին ձևավորվել է արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժին, որի նպատակն է ապահովել հաղորդակցությունը և կապը օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ՝ քոլեջի կապերը տարբեր կառույցների և հաստատությունների հետ զարգացնելու, տեսանելիությունը բարձրացնելու, սովորողների շարժունությանը նպաստելու նպատակով:

5. Որակի ապահովում. ԵՕՀՊՄՔ-ն իր ռազմավարությամբ (2021-2026թթ. նպատակ 3, խնդիր 3.4.) նպատակ ունի զարգացնել որակի կառավարման համակարգի արդյունավետությունը միջազգային չափանիշներին համապատասխան: Քոլեջն առաջիկա տարիների համար նախատեսում է ՝

- Քոլեջի բոլոր գործընթացներում մեկնարկել որակի ապահովման համակարգի շրջափուլային (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ)) գործընթաց:
- Մշակել որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր:
- Մշակել և ներդնել որակի ապահովման գործընթացի մեխանիզմներ և գործիքակազմեր:
- Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և գնահատել դրա արդյունավետությունը:
- Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ:

Այս փուլում մշակվել են քաղաքականություններ և ընթացակարգեր, որակի ապահովման համապատասխան գործիքներ, ապահովել ներքին և արտաքին շահակիցների մասնակցություն: Քոլեջը դեռևս հնարավորություն չի ունեցել համապատասխան ցուցիչների և գործիքների կիրառկմամբ փաստել իրականացվող գործընթացների արդյունավետությունը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանրակրթական և միջին մասնագիտական, մարզական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպություն է: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից 2020թ. հունվարի 8-ին հաստատված կանոնադրությամբ սահմանված են քոլեջի նպատակները: Քոլեջի առաքելությունն է՝ պատրաստել մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով զինված, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարձրակարգ և մրցունակ մասնագետներ՝ մարզիչներ: Պետք է փաստել, որ միևնույն ժամանակ քոլեջը պատրաստում է օլիմպիական ռեզերվի մարզիկներ և ցուցաբերում է մարզական բարձր արդյունքներ ինչպես ՀՀ -ում, այնպես էլ՝ արտերկրում, այն իր ուղղվածությամբ եզակի է սպորտի ոլորտում: ՄՈՒՀ-ը կարևորում է մարզական արդյունքների ապահովմանը զուգահեռ բարձրակարգ մարզիչների պատարաստումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները, շրջանավարտները, դասախոսները կիսում են քոլեջի առաքելությունը:

Ուսումնական հաստատությունն իրականացնում է հանրակրթական կրթություն 7-12-րդ դասարաններում և միջին մասնագիտական կրթություն 4 տարի տևողությամբ: ԵՕՀՊՄՔ-ն իրականացնում է մեկ՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», միջին մասնագիտական կրթական ծրագիր, որում ներառված են 13 հենակետային (ծանրամարտ, ըմբշամարտ, բոնքամարտ, սամբո, ձյուդո և այլն) և ոչ հենակետային մարզաձևեր (մարմնամարզություն, լող, աթլետիկա և այլն)՝ շնորհելով մարզիչի որակավորում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավար անձնակազմը կարևորում է ներդրված բոլոր սպորտաձևերի հավասարզոր զարգացումը, վերջին տարիներին կարևորվել է նաև այն մարզաձևերի ներգրավումը, որտեղ մարզվում են աղջիկներ (գեղարվեստական մարմնամարզություն, ակրոբատիկա): Ըստ հաստատության գոծունեության՝ ԵՕՀՊՄՔ-ն տրամադրում է կրթություն Որակավորումների ազգային շրջանակի 2–րդ (ներառյալ հանրակրթական դպրոցը), 3-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան:

ԵՕՀՊՄՔ-ի Ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ) նախատեսված է 2021-2026 թթ.-ի համար: Համաձայն ինքնավերլուծության՝ մինչև 2021 թվականը քոլեջի առաքելությունն ու նպատակներն արտահայտված են եղել կանոնադրության մեջ, և ԵՕՀՊՄՔ-ն իր գործունեությունը ծավալել է համաձայն տնօրենի ներկայացրած նախընտրական զարգացման ծրագրի կառավարման խորհրդի որոշումների:

2021-2026 թթ.-ի ՌԾ-ում ներկայացված է ՄՈՒՀ-ի տեսլականը, հիմնարար արժեքները, նպատակներն ու խնդիրները: ՌԾ-ում ԵՕՀՊՄՔ-ն առանձնացրել է 4 հիմնական ոլորտներ՝

կրթություն, սպորտ, համագործակցություն և արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ենթակառուցվածքների համապատասխանություն։

Նշված 4 ոլորտներում սահմանվել են նաև 4 հիմնական նպատակներ՝

- Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության որակի ապահովում և բարելավում,
- Մարզական հերթափոխի պատրաստման համակարգի արդիականացում, մարզումների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- Քոլեջի շարունակական զարգացում՝ ազգային և միջազգային մակարդակներում անընդհատ համագործակցության պայմաններում,
- Քոլեջի կառավարման համակարգի բարեփոխում և արդյունավետության բարձրացում, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում, քոլեջի առաքելությանը, տեսլականին և նպատակներին համապատասխան ենթակառուցվածքների ապահովում։

Սահմանված 4 նպատակների արդյունավետ իրագործման համար առանձնացված են 9 ռազմավարական հիմնախնդիրներ, դրանց լուծման համար անհրաժեշտ գործողություններ, ակնկալվող արդյունքներ, գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ), պատասխանատուներ, ժամկետներ և անհրաժեշտ ռեսուրներ։ Պետք է նշել, որ պլան-ժամանակացույցում ներդրված որակական և քանակական ԳԱՑ-երը մեծամասամբ չափելի են, սակայն ներկայացված ժամկետները հստակ չեն և հիմնականում նշված են «շարունակական»,իսկ որպես պահանջվող ռեսուրսներ ներկայացված են «մարդկային և/կամ նյութական ռեսուրսներ», նաև գործողություններից ակնկալվող արդյունքները ոչ միշտ են արտացոլում բարեփոխումները, օրինակ՝ ՄԿԾ-ի ուսումնական պլանների վերանայում աշխատաշուկային համապատասխան գործողության ակնկալվող արդյունքը վերանայված ուսումնական պլանն է։ ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված ակնկալվող արդյունքների ձեռքբերման վերաբերյալ վերլուծություն դեռևս առկա չէ։

Ըստ ԵՕՀՊՄՔ-ի Որակի ապահովման բաժնի կանոնակարգի՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, վարչական և այլ աշխատակիցները, իսկ արտաքին շահակիցները՝ դիմորդները, շրջանավարտները, գործատուները, կառավարությունը և լիազոր մարմինը։ Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում գործում են արտաքին և ներքին շահակիցների կարիքները բացահայտող որոշ մեխանիզմներ՝ հանդիպում-քննարկումների կազմակերպում, հարցումների իրականացում (վերջինս նոր է ներդրվել)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մի շարք հանդիպումներ չեն արձանագրվել և մնացել են բանավոր մակարդակում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՕՀՊՄՔ-ի և գործատուների հետ փոխհարաբերությունները բավական սերտ են, գործատուները լավատեղյակ են քոլեջի խնդիրներին, ինչպես նաև սպորտային գործունեության շրջանակներում իրականացնում են համատեղ գործունեություն, օրինակ՝ մարզահավաքներ, մրցումներին մասնակցություն և այլն։ Գործատուներն ակնկալում են, որ քոլեջը կպատրաստի բարձրակարգ մարզիչներ, իսկ ուսանողներն ակնկալում են նաև ուսումնառությանը զուգահեռ ապահովել մարզական կարիերայի շարունակականություն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների հիմնական շրջանակը անմիջական մասնակցություն չի ունեցել ՌԾ-ի մշակմանը, սակայն նրանք տեղեկացված են ՌԾ նպատակներից և կիսում են դրանք։

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջի նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմը հաշվետվությունների համակարգն է, որի հիմնական բաղադրիչը տնօրենի տարեկան հաշվետվությունն է։ Տարեկան հաշվետվությունները ներկայացվում են քոլեջի խորհրդին և նախարարությանը։ Հաշվետվությունների քննարկման հիման վրա կայացվում են որոշումներ՝ հաջորդ պարբերաշրջանի գերակայությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առաջիկա տարվա համար առաջնային ուղղություն է ընտրվել մարազադահլիճների հիմնանորոգումը և մարզասարքերով ու ռեսուրսներով ապահովումը։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տնօրենի հաշվետվության ընտրված ձևաչափը ոչ միշտ է թույլ տալիս ամբողջությամբ գնահատել ՌԾ-ի արդյունքները։ Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը գրեթե բացակայում է, չկան քանակական և որակական գնահատականներ, որոնք նաև կարտացոլեն ՌԾ նախատեսված արդյունքների գնահատումը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի զարգացման հեռանկարների հստակ սահմանումը և զարգացման ապահովումը։ Այս համատեքստում փորձագիտական խումբը բարձր է գնահատում քոլեջի կողմից պետության և հասարակության առաջ ստանձնած պարտավորությունների լիարժեք իրագործումը՝ որպես Օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջ, այն է՝ բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային սպորտային հարթակներում ՀՀ սպորտային նվաճումներին նպաստելը և մասնակիցը լինելը։ Միևնույն ժամանակ քոլեջի առաքելությունը սահմանում է պատրաստել որակյալ մարզիչներ, դրանով իսկ քոլեջը կարևորում է մարզիկ-ուսանողների ուսումնառության գործընթացը, որն արտահայտվում է կրթական գործընթացի կազմակերպման բոլոր մակարդակներում։ Այնուհանդերձ, քոլեջն ընկալումների մակարդակում իր համար կարևոր այս երկու ուղղություններից գերակա է համարում ուսումնառող բարձրակարգ մարզիկների մարզական արդյունքները, որոնք արդարացիորեն շեշտադրվում են որպես քոլեջի ձեռքբերումներ։ Ակնհայտ է, որ քոլեջն իր առջև նաև խնդիր է դրել պատրաստել բարձրակարգ մարզիկներ, մյուս կողմից առաքելության մեջ շեշտադրվում է միայն մարզիչների պատրաստությունը։ Փորձագիտական խումբը կարծում է, որ վերոհիշյալ երկու ուղղությունները իսկապես բխում են քոլեջի առաքելությունից և առաջադրված նպատակներից։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ն ունի հիմնական գործունեությունն արտահայտող հստակ և ընկալելի ձևակերպված առաքելություն, որը ընդունելի է ներքին և արտաքին շահակիցների կողմից։ Քոլեջի առաքելությունը, տեսլականը, նպատակները և այդ նպատակների իրագործմանն ուղղված գործողություններն ամրագրված են ինչպես կանոնադրությամբ, այնպես էլ 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրերով։ Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ ՄՈՒՀ-ը մշակել է ՌԾ, դրա կատարման պլան-ժամանակցույց, որտեղ ներդրված են հստակ սահմանված ԳԱՑ-եր, որը

կարող է նպաստել ՌԾ-ի արդյունավետության գնահատմանը: Մյուս կողմից՝ ժամկետների, տրամադրվող ռեսուրսների և արդյունքների անհստակությունը կարող է խոչընդոտել ՌԾ նպատակների լիարժեք իրականացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ իրականացման պլան-ժամանակցույցի կատարողականի վերլուծությունն այս պահին հրատապ է ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ղեկավար անձնակազմը կարևորում է ոչ միայն հենակետային, այլև՝ ոչ հենակետային մարզաձևերի զարգացումը, որը կնպաստի ներդրված բոլոր սպորտաձևերում հաջողությունների արձանագրմանը:

Չնայած այն փաստին, որ ՌԾ-ի մշակման գործընթացում ներգրավված են եղել արտաքին և ներքին շահակիցների փոքր շրջանակ, սակայն շահակիցների հետ ակտիվ շփումները նպաստել են նրան, որ նրանք տեղյակ են, ընդունում են և կիսում են դրանք: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետագայում կարևոր է նրանց մասնակցությունն ապահովող ֆորմալ մեխանիզմների ներդրումը, որը կնպաստի ոլորտի վերաբերյալ համակարգային, բազմաշերտ տվյալների դուրսբերմանը և առաջնահերթությունների սահմանմանը:

ՄՈՒՀ-ում ներդրված է հաշվետվողականության համակարգ, որը ներկայումս ՌԾ-ի գնահատման միակ մեխանիզմն է, սակայն դրա հետ մեկտեղ նկատելի են տնօրենի տարեկան հաշվետվությունների և ռազմավարական ծրագրի փոխկապակցվածության բացակայությունը, հաշվետվությունների նկարագրական բնույթը, որը կարող է խոչընդոտել ՌԾ-ի կատարողականի լիարժեք գնահատումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՕՀՊՄՔ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը, որը համահունչ է ՈԱՇ-ին, ներդրված է ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման պլան-ժամանակացույց, սահմանված նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտահայտում են շահակիցների կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ-ի կառավարումն իրականացվում է Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի՝ Քոլեջի խորհրդի և գործադիր մարմնի՝ Քոլեջի տնօրենի միջոցով: Քոլեջի գործունեությունը ղեկավարվում է ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» օրենքներով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և իր կանոնադրությամբ:

Քոլեջի կառավարմանը մասնակցում են կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները, հանձնաժողովները և խորհուրդները: Դրանք գործում են Քոլեջիկանոնադրությանը, ստորաբաժանումների կանոնադրություններին, ներքինկարգապահական կանոններին և այլ իրավական ակտերին համաձայն:

ՄՈՒՀ-ի կոլեգիալ կառավարման մարմինը ԵՕՀՊՄՔ-ի խորհուրդն է, որը գործում է քոլեջի կանոնադրության համաձայն: Կառավարման խորհուրդը (ԿԽ) իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը: Խորհրդի նիստերն անցկացվում են քոլեջի կանոնադրությանը և խորհրդի աշխատակարգին համապատասխան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԿԽ-ն նոր է ընտրվել, խորհրդում ընդգրկված արտաքին շահակիցները պատրաստակամ են աջակցելու քոլեջին ՌԾ-ի իրականացման գործում, հատկապես՝ արտաքին կապերի զարգացման և մարքեթինգային ճիշտ քաղաքականության իրականացման ուղղությամբ: Առկա են որոշ պլանավորումներ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից հյուրընկալած միջազգային պատվիրակությունները քոլեջ ուղղորդելու ուղղությամբ: Պետք է նաև նշել, որ կառավարման խորհրդի համար տնօրենի աշխատանքի արդյունավետության գնահատման հիմնական ցուցիչներ են դիտարկվում քոլեջի սաների մարզական հաջողությունները և ուսման մեջ գրանցած հաջողությունները (հաջողությունը չափվում է ուսանողի ստացած գնահատականով):

Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Տնօրենն իր լիազորությունների սահմաններում արձակում է քոլեջում և նրա ստորաբաժանումներում կատարման համար պարտադիր հրամաններ, հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը: ԵՕՀՊՄՔ-ի տնօրենն ընտրվել է 2019 թվականին, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենի ընտրվելուց հետո քոլեջում տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ, նրա ջանքերով քոլեջում տեղի են ունենում ինչպես ռեսուրսային բազայի հարստացում, այնպես էլ՝ կառավարման համակարգի զարգացում: Փորձագիտական խումբը փաստում է, որ տնօրենը քոլեջում մեծ հեղինակություն է վայելում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում:

Քոլեջի կրթության և դաստիարակության, մարզման որակի կատարելագործման

մեթոդական աշխատանքների, մարզիչների և մանկավարժների մասնագիտական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով գործում են մանկավարժական և մարզչական խորհուրդներ, որոնք աշխատում են խորհրդի կողմից հաստատված կանոնակարգով:

Ուսանողների շահերը և իրավունքները պաշտպանող, նրանց կրթական, մարզական կարիքները վերհանող կառույցը ուսանողական խորհուրդն է (ՈՒԽ), որի լիազորությունները սահմանված են ՈՒԽ-ի կանոնադրությամբ:

Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում, վերջին տարիներին քոլեջի կառավարման համակարգը կատարելագործելու նպատակով մշակվել և ներդրվել են մի շարք հիմնարար փաստաթղթեր՝ Ռազմավարական ծրագիր, Ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց, պաշտոնի անձնագրեր, և կանոնակարգեր՝ «Կարիերայի զարգացման և պրակտիկայի բաժնի», «Դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման», «Ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման, գնահատման, ստացված գնահատականների վերահանձնման», «Ներքին կարգապահական կանոններ» և այլն: Փորձագիտական խումբը նշում է, որ սա քոլեջի Ռազմավարական պլանավորման առաջին փորձն է: Բոլոր պաշտոնների համար ներդրվել են պաշտոնի անձնագրեր, որոնցով տարանջատվել են աշխատակիցների գործառույթները: Պետք է նշել,որ բավական լայն է ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի գործառույթների շրջանակը, որը միաժամանակ համակարգում է ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ հանրակրթական դպրոցի աշխատանքները:

Փաստաթղթերը հիմնականում ներդրվել են 2019-2021 թվականներին:

ՌԾ նպատակներին համապատասխան վերանայվել է նաև քոլեջի կազմակերպական կառուցվածքը (2021թ -), որով առավել հստակեցվել են կառուցվածքային միավորները: Ներդրվել են նոր հաստիքներ՝ Կարիերայի պատասխանատուի, Որակի ապահովման պատասխանատուի: Ներդրվել է նաև Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի պատասխանատուի պաշտոնը, ներկայումս աշխատանքներն իրականացվում են հասարակական հիմունքներով:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Դասախոսներն ընդգրկված են մանկավարժական և տնօրենական խորհուրդներում, ուսումնամեթոդական և մարզչական խորհուրդներում: Վերը նշված կառույցների միջոցով դասախոսական կազմը հնարավորություն ունի մասնակցելու, քննարկելու և բարձրաձայնելու առկա բոլոր խնդիրները, առաջարկները և ստանալու անհրաժեշտ լուծումները: Դասախոսները կառավարման գործընթացին մասնակցում են հիմանականում կրթական գործընթացներին վերաբերվող հարցերի շուրջ, մասնավորապես՝ մեթոդ-միավորումների միջոցով:

Ուսանողները բարձր ակտիվություն չեն ցուցաբերում կառավարման խորհրդում, որի մասին փաստում է նաև ԵՕՀՊՄՔ-ն իր ինքնավերլուծությամբ: Ուսանողների առաջարկությունները հիմնականում վերաբերում են ռեսուրսների բարելավմանը՝ մարզադահլիճների, սննդի որակի բարելավում և այլն:

ԵՕՀՊՄՔ-ում որպես երկարաժակետ պլանավորում դիտարկվում է քոլեջի 2021-2026 թթ.-ի ռազմավարական ծրագիրը: Քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով

ստորաբաժանումները կազմում են տարեկան աշխատանքային պլաններ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ստորաբաժանումների կարճաժամկետ պլանավորումներն ամբողջովին համադրելի չեն քոլեջի ՌԾ-ին և ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակցույցին: Առկա չէ կարճաժակետ պլանավորման միասնական ձևաչափ: Աշխատանքային պլանները մշակվում են ելնելով ստորաբաժանումների հիմնական գործառույթներից և աշխատակիցների աշխատանքային փորձառությունից:

Քոլեջի բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հաշվետվություններ՝ (տնօրեն, փոխտնօրեններ, ամբիոնի վարիչներ, կարիերայի պատասխանատու, միջին մասնագիտական բաժին և այլն): Ստորաբաժանումների հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնվում են աշխատանքային պլանների վրա, հաշվետվությունները պարզապես հաստատում կամ ժխտում են աշխատանքային պլանում սահմանված գործողությունների իրականացումը: Հաշվետվություններում բացակայում են վերլուծությունները, ներկայացված չեն չիրականացված գործողությունների պատճառները: Տնօրենի հաշվետվությունները ներկայացված են 3 բաժիններով՝ Մարզական, Միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող և Արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ենթակառուցվածքների համապատասխանություն:

Փորձագիտական խումբը փաստում է, որ ԵՕՀՊՄՔ-ն փորձել է տնօրենի հաշվետվության ձևաչափը որոշակիորեն համապատասխանեցնել ՌԾ նպատակներին: Տնօրենի հաշվետվության մեջ առկա են որոշակի քանակական տվյալներ կապված ուսանողների մարզական հաջողությունների և ընդունելության վերաբերյալ: Մնացյալ տեղեկատվությունը վերաբերում է քոլեջում կազմակերպված ճանաչողական միջոցառումներին, դասալսումներին և դասախոսների կողմից ընտրված դասավանդման լավ փորձերին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում: Ներդրված քաղաքականությունների և ընթացակարգերի արդյունավետության գնահատումներ դեռևս առկա չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը դեռևս լիարժեքորեն չի պատկերացնում գնահատման գործընթացների մեխանիզմները:

ԵՕՀՊՄՔ-ի տարեկան ֆինանսական գործունեությունը պլանավորվում է համաձայն քոլեջի կառավարման խորհրդի կողմից հաստատված ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի (քոլեջի նախահաշիվը): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ COVID19 համավարակի ընթացքում ԵՕՀՊՄՔ-ն կարողացել է տնտեսել որոշակի գումար, որն ուղղել է հանրակացարանի ամբողջական կահավորմանը, ջեռուցման համակարգի, հոսանքագծերի և ջրագծերի վերանորոգմանը: Մարզադահլիճների հիմնանորոգման նախագծով ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը դիմել է նախարարությանը՝ նախապես կազմելով նախագծանախահաշվային ծախսերը: Նախագիծը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից և քոլեջին հատկացվել է համապատասխան ֆինանսավորում մարզադահլիճների հիմնոնորոգման համար:

ԵՕՀՊՄՔ-ի գործունեության վրա ազդող ներքին գործոնները բացահայտելու նպատակով ՄՈՒՀ-ն իրականացրել է ներքին շահակիցների՝ ուսանողների շրջանում մեկանգամյա հարցում: Ըստ ինքնավերլուծության՝ հետագայում նախատեսվում է

հարցումներն իրականացնել կանոնավոր՝ ամենամյա պարբերականությամբ: Արտաքին և ներքին գործոնները հիմնականում բացահայտվում են նաև տարբեր շահակիցների հետ բանավոր քննարկումների արդյունքում:

Կրթական, մարզական ծրագրերի իրականացման և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը հիմնականում իրականացվում է գործատուների հետ հանդիպումների, մրցաշարերի արդյունքների, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հիման վրա: Պետք է նաև նշել, որ ստացվող տվյալները խորը վերլուծության չեն ենթարկվում:

Քոլեջն իր պաշտոնական ֆեյսբուքյան էջի, տարբեր տեղական և միջազգային մրցաշարերի միջոցով հրապարակային է դարձնում ուսանողների և շրջանավարտների մարզական նվաճումները: Պետք է նշել, որ հրապարակումների առանցքում մարզական հաջողություններն են, այլ ոչ՝ մարզչական:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված ԵՕՀՊՄՔ-ի ջանքերը, այդ նպատակով մշակվել և ներդրվել են մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնք կանոնակարգել են քոլեջում իրականացվող հիմնական գործընթացները: Փորձագիտական խմբի համար ակնառու են այն բարեփոխումները, որոնք իրականացվել են քոլեջում վերջին երեք տարիների ընթացքում, որը պայմանավորված է նոր տնօրենի պաշտոնավարմամբ: Գովելի է, որ ԵՕՀՊՄՔ-ում տեղի ունեցող բարեփոխումները չեն հիմնվում միայն անձերի վրա, այլև ստեղծվում են ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կարող են ապահովել համակարգի հետագա զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ դասախոսներն ու ուսանողները ներգրավված են քոլեջի կառավարման գործընթացում և կարող են հանդես գալ առաջարկություններով: Գովելի է, որ չնայած կառավարման խորհրդի նոր լինելուն, անդամներն իրենց դիտարկում են նաև հիմնական դերակատար քոլեջի գործընկերային շրջանակի մեծացման և զարգացման գործում: Թեև ԿԽ-ն ունի որոշակի ցուցիչներ տնօրենի տարեկան գործունեությունը գնահատելու համար, այուամենայնիվ այդ ցուցիչները առավելապես միտված են սպորտային հաջողություններին, որը կարող է վտանգել ուսանողի՝ որպես մարզիչի լիարժեք կայացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ն իրականացրել է նաև կազմակերպական կառուցվածքի վերանայում՝ ապահովել կապը ՌԾ-ի հետ: Ներդրվել են պաշտոնի անձնագրեր, որոնք նպաստել են աշխատակիցների գործառույթների հստակ տարանջատմանը և համակարգմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՕՀՊՄՔ-ում ներդրվել են ռազմավարական նպատակներից բխող նոր հաստիքներ, որը փորձագիտական խումբը դիտարկում է որպես առաջընթաց քայլ ռազմավարական նպատակների իրագործման ճանապարհին, իսկ հաստիքների նպատակային գործարկումը կարող է նպաստել տվյալահենք որոշումների կայացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ համագործակցության և հասարակայնության բաժինը նույնպես կարող է դառնալ վճարովի

հաստիք՝ աշխատակցի առջև դնելով հստակ խնդիրներ և արդյունքներ, քանի որ ուսումնական հաստատությունն ունի միջազգայնացման գործընթացները զարգացնելու բոլոր նախադրյալները։

Փորձագիտական խմբի համար գովելի է, որ ԵՕՀՊՄՔ-ն կարողանում է իրականացնել որոշակի տնտեսումներ և ապահովել արդյունավետ ֆինանսական կառավարում՝ տնտեսված ֆինանսական միջոցներն ուղղելով քոլեջի զարգացմանը և ռեսուրսային բազայի հարստացմանը։ ՄՈՒՀ-ը բացառապես հիմնված է պետական ֆինանսավորման վրա, որն ապահովում է քոլեջին կայունությամբ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է նաև դիվերսիֆիկացված բյուջե, որը կնպաստի ռազմավարական բոլոր խնդիրների լիարժեք իրագործումը։ ՄՈՒՀ-ը առաջիկայում կարող է գտնել նաև արտաբյուջեի ձևավորման տարբերակներ՝ ապահովելով իր գործունեության այլ ոլորտների հավասարաչափ զարգացում։ Միևնույն ժամանակ գովելի է, որ ՌԾ նպատակների իրականացման համար քոլեջը չի բավարարվում միայն ուսումնական և մարզական գործընթացի համար տրամադրվող ֆինանսական միջոցներով, այլ ցուցաբերում է նախաձեռնողականություն՝ ներկայացնելով տարբեր նախագծեր և արժանանալով այդ նախագծերի հաստատմանը պետության կողմից։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսներն ու ուսանողները ներգրավված են քոլեջի կառավարման գործընթացներում, այնուամենայնիվ անհրաժեշտություն է նկատվում նրանց գործունեությունն առավել ակտիվացնելու։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում առկա են կարճաժամկետ պլանավորման և հաշվետվողականության հստակ սահմանված համակարգ, սակայն դրանք ոչ միշտ են ամբողջությամբ համադրելի երկարաժամկետ ռազմավարական ծրագրին, նաև բացակայում է վերլուծական բաղադրիչը, որը կարող է խոչընդոտել խնդիրների վերհամանը և ՌԾ-ի լիարժեք իրականացմանը։

ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների մեծ մասը գտնվում է ՊԻԳԲ շրջափուլի պլանավորում և իրականացում փուլում։ Գնահատման և բարելավման մեխանիզմների մշակումը և բազմազանեցումը քոլեջում իրականացվող բոլոր գործընթացների համար կնպաստի ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ առկա են ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման մեխանիզմներ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների բովանդակային բաղադրիչը և դրանց հիման վրա կատարված վերլուծությունները դեռևս չեն նպաստում կառավարման տեսակետից արդյունավետ որոշումների կայացմանը։ Անհրաժեշտ են կատարելագործել մեխանիզմները, որը հնարավորություն կտա իրականացնելու խորը և համակարգային վերլուծություններ։ Դրական է, որ ուսումնական հաստատությունն իր ֆեյսբուքյան էջի միջոցով հրապարակում է ուսանողների մարզական հաջողությունները, այնուամենայնիվ չի տարածվում տեղեկատվություն քոլեջի շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ որպես մարզիչներ, որը կնպաստեր մարզիչ որակավորման դերի բաձրացմանը և կրթական ծրագրի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին ԵՕՀՊՄՔ-ի կառավարման

համակարգում տեղի են ունեցել զգալի բարեփոխումներ՝ ներդրվել են կառավարման համակարգը կանոնակարգող մի շարք փաստաթղթեր, տարանջատվել և հստակեցվել են աշխատակիցների գործառույթները, վերանայվել է կազմակերպական կառուցվածքը, ներդրվել են ՌԾ իրականացմանը նպաստող նոր հաստիքներ, ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են կառավարման գործընթացում, ինչպես նաև իրականացվում է ֆինանսական արդյունավետ կառավարում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՕՀՊՄՔ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ԵՕՀՊՔ-ն իրականացնում է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթական ծրագիրը, ուսումնառության արդյունքում շնորհվում է մարզիչի որակավորում: Կրթությունը կազմակերպվում է առկա ուսուցմամբ հիմնական կրթության հիմքով (չորս տարի) և միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով (երեք տարի), ներկա փուլում քոլեջում իրականացվում է միայն 4-ամյա կրթությունը:

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտական կրթական ծրագիրը (ՄԿԾ) մշակվել է հիմք ընդունելով գործող միջին մասնագիտական կրթության ՀՀ պետական կրթական չափորոշիչը (ՊԿՉ): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՕՀՊՔ-ն մասնակցություն է ունեցել Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից կազմակերպված ՊԿՉ-ի մշակման և լրամշակման գործընթացներին: ԵՕՀՊՔ-ն հանդես է եկել մոդուլային ծրագրերի ավելացման և օպտիմալացման առաջարկություններով, որոնք տեղ են գտել ՊԿՉ-ում, օրինակ՝ ավելացվել է «Սպորտային մարզման տեսություն», «Մարզական տերմինաբանություն» մոդուլային ծրագիրը և կատարվել է ժամաքանակների փոփոխությունը «Ֆիզիկական դաստիարակության տեսություն» (ժամերն ուռճացված են եղել) մոդուլային ծրագրում:

Մոդուլային ծրագրերի տեսական և գործնական ժամերի հարաբերակցությունը որոշվել է քոլեջի կողմից: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմնականում գերակշռում են գործնական ժամերը, հանրակրթական առարկաները ամբողջությամբ բաղկացած են գործնական և լաբորատոր ժամերից, մյուս մոդուլներում պահպանվել է 70% գործնական, 30% տեսական հարաբերակցությունը: Ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներում ընտրվել է 60% գործնական և 40% տեսական հարբերակցությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նպատակահարմար չի գտել առավել շատ

գործնական ժամեր հատկացնել մասնագիտական մոդուլներին, քանի որ ուսումնառողները գործող մարզիկներ են և գործնական մասնագիտական գիտելիքների յուրացումն իրագործվում է նաև ուսումնառությանը զուգորդող օրական 2-անգամյա մարզումների ընթացքում:

ՄԿԾ ուսումնական պլանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հատուկ մասնագիտական կրթամասում ներառված մի շարք մոդուլներ՝ Ընդհանուր և սպորտի հոգեբանության հիմունքներ, Ֆիզիոլոգիայի ընդհանուր հիմունքներ, Ընդհանուր և սպորտի կենսաքիմիայի հիմունքներ, Կենսամեխանիկայի ընդհանուր հիմունքներ, Սպորտային բժշկության ընդհանուր հիմունքներ, ըստ ՊԿՉ-ի (2021թ.) գտնվում են ընդհանուր մասնագիտական կրթամասում: Հարկ է նաև նշել, որ ՊԿՉ-ում ներառված է նաև ընտրված մարզաձևից մարզական պարապմունքների շաբաթական բեռնվածությունը, որը կազմում է 24 ժամ, սակայն ուսումնական պլանում այս տեղեկատվությունը պատշաճ ներկայացված չէ (մոդուլների ցանկում նշած է «մարզական վարպետության կատարելագործում» առանց շաբաթական բեռնվածության վերաբերյալ տեղեկատվության):

Կրթական ծրագրում ներառված է 3 պրակտիկա. ուսումնամարզչական տեսական ուսուցմամբ (3-րդ և 5-րդ կիսամյակներում 1 շաբաթ և 7-րդ կիսամյակում 5 շաբաթ տևողությամբ), ուսումնամարզչական ճամբարային առողջարարական (անցակցվում է 2-րդ, 4-րդ և 6-րդ կիսամյակներում 2-ական շաբաթ տևողությամբ): Նշված պրակտիկաներն անցկացվում են քոլեջի բազայի հիման վրա: Նախաավարտական պրակտիկան, որը նախատեսված է 8-րդ կիսամյակում 4 շաբաթ տևողությամբ, անցկացվում է ՀՀ մարզադպրոցներում: Պրակտիկաները կազմակերպվում և վերահսկվում են պրակտիկայի բաժնի կողմից, ուսումնամարզական պրակտիկաները վերաբերում են ընտրված մարզաձևին և անցակացվում են քոլեջում իրականացվող մարզումների ընթացքում մարզիչ-մեթոդիստների վերահսկողությամբ: Հարկ է նշել, որ քոլեջն ունի նաև մարզադպրոցի կարգավիճակ և մասնակցում է ՀՀ-ում կազմակերպվող մրցումներին, մրցաշարերին և ՀՀ առաջնություններին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ուսանողները հնարավորություն ունեն նաև մրցավարության փորձառություն ձեռք բերել տարբեր երիտասարդական և պատանեկան առաջնություններում:

Մոդուլների ուսումնառության արդյունքների հիման վրա քոլեջը մշակել է ՄԿԾ վերջնարդյունքները՝ համապատասխանեցնելով ՈԱՇ-ի հետ: Քարտեզագրվել են նաև կրթական ծրագրով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանությունը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության, գնահատման մեթոդների համապատասխանությունը ՄԿԾ վերջնարդյունքներին:

2021թ. ՄՈՒՀ-ը ընդունել է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն կանոնակարգը, մասնավորապես իր առջև խնդիր դնելով կրթական ծրագրի և առանձին դասընթացների համար սահմանել և կանոնակարգել վերջնարդյունքահենք դասավանդման և ուսումնառության մեթոդներ: ՄՈՒՀ-ը մեթոդների ընտրության հարցում, որպես առաջնահերթություն սահմանել է նաև ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ուսանողակենտրոն մոտեցումները: Չնայած քաղաքականության առկայությանը որպես փաստաթուղթ, ՄՈՒՀ-ը դեռևս գործնականում

այն կիրառում է հատվածային կերպով։ Ներքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքները ցույց տվեցին, որ մեթոդների ընտրության հարցում չկան միասնական մոտեցումներ, դասախոսները դրսևորում են ինքնուրույնություն, երբեմն մեթոդների ընտրությանը ներգրավում են նաև ուսանողներին։ Թեև առանձին դասախոսների կողմից նշվեցին նաև ինտերակտիվ մեթոդների կիրառության օրինակներ (օտար լեզուներ, հաղորդակցման հմտություններ), այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում դասալսումների արդյունքները ցույց տվեցին, որ տեսական դասերում գերակշռում են խոսքային մեթոդների կիրառությունը՝ դասախոսություն, զրույց-քննարկում, առկա էին նաև ինտերակտիվ մեթոդների հատվածային կիրառումներ՝ օրինակ խմբային աշխատանք։ Գործնական մասնագիտական (մարզական) պարապմունքների դիտարկումները ցույց տվեցին, որ կիրառվում են ֆիզիկական դաստիարակության և սպորտի մեթոդական միջոցների համալիրը։Հարկ է նշել, որ դասախոսական կազմը ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառությունը փոխկապակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների հետ՝ պրոյեկտոր, համակարգիչներ։ Ներկայումս առկա է միայն պրոյեկտորով մեկ լսարան, որից օգտվում են ինչպես քոլեջի, այնպես էլ հանրակրթական բաժնի սովորողները։ Ներքին շահակիցների կողմից նշվեց, որ վերոնշյալ ռեսուրսը դեռևս սակավ է մի քանի դասավանդողների կողմից միաժամանակ կիրառության համար։

Դասավանդող կազմի հետ մասնագիտական հանդիպումից պարզ դարձավ, որ մեծամասնությունը պրակտիկ ոլորտի ներակայացուցիչներ են՝ գործող մարզիչներ։ Մասնագիտական առարկաների դասավանդման մեթոդների ընտրության հարցում նրանց կողմից նախապատվությունը տրվում է սեմինար քննարկումներին, որի նպատակն է ուսանողների մոտ մասնագիտական տերմինաբանության կիրառությամբ խթանել բանավոր խոսքի զարգացումը, քանի որ տարբեր տարիների ընթացքում պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփումը ցույց է տվել, որ թեև մասնագիտական գիտելիքը յուրացված է, սակայն մարզիկ ուսանողների մոտ նկատվել է մասնագիտորեն գրագետ և համակարգված արտահայտման խնդիր։ Դասավանդողները բազմիցս նշեցին, որ ուսանողները կարող են ցուցադրել իրենց պրակտիկ կարողությունները, սակայն դժվարանում են բացատրել։ Պարզ դարձավ նաև, որ «Մասնագիտություն» մոդուլային ծրագրի շրջանակներում մեթոդների և հանձնարարականների ընտրությունը պայմանավորվում է նաև տվյալ մարզաձևի առանձնահատկություններով։ Բարդ կոորդինացիոն մարզաձևերում (ֆուտբոլ), որոնք պահանջում են արագ կողմնորոշվելու հմտություններ, ուսանողներին տրվում են որոշակի վերլուծական առաջադրանքներ։ Դասավանդման ընթացքում ուսումնասիրվում են տեխնիկա-տակտիկական սխեմաներ, հնարքներ, մրցակցական ելույթների տեսագրություններ, իսկ օրինակ արագաուժային մարզաձևերում (ծանրամարտ, ըմբշամարտ) ավելի շատ շեշտադրվում է սպորտային հնարքների, տեխնիկայի ուսուցման և կատարելագործման մեթոդների ուսումնասիրությունը։ Միևնույն ժամանակ, տարբեր մարզաձևերի «Մասնագիտություն» Մոդուլային ծրագրերի համեմատությունից պարզ դարձավ, որ թեմատիկ պլանավորումը և ժամերի բաշխումը համահունչ են մեկը մյուսին՝ ըստ բովանդակային կառուցվածքի և ուսումնառության արդյունքների։

Ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկումը ցույց տվեց, որ

հետազոտական և վերլուծական հմտությունների ձևավորմանը նպաստող հանձնարարականները սակավ են: Հիմնականում ուսումնառության նյութից բացի ուսանողներին այլ գրականության և աղբյուրների ուսումնասիրություն չի հանձնարարվում: Առկա են միայն մասնավոր դեպքեր, երբ ուսանողներին հանձնարարվել է հայտնի որևիցէ մարզիկի մասին նյութ պատրաստել:

ՄՈՒՀ-ն ունի սահմանված գնահատման կանոնակարգ (2019թ -), որտեղ ներկայացվում է գնահատման կարգը, սակայն ընթացիկ գիտելիքների ստուգումների, ստուգարքների տարբերակված ստուգարքների և քննությունների վերաբերյալ չկա լիարժեք պարզաբանում, երբեմն մեկտղված են ընթացիկ և ամփոփիչ հասկացությունները, օրինակ կանոնակարգի 6-րդ կետում նշված է, որ «Ուսանողների ընթացիկ գիտելիքների ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին (առարկայից/մոդուլից):Ուսանողները հանձնում են տարբերակված ստուգարքներ և քննություններ)»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ օրինակ տարբերակված ստուգարք (քննություն) նշանակում է, որ ուսանողն իր ցանկությամբ կարող է մեխանիկորեն գնահատվել ընթացիկ գնահատականների (ստուգարքների) միջինի համաձայն, կամ հանձնել ամփոփիչ քննություն:

Քոլեջում գործում է 10 միավորային գնահատման սանդղակ, գնահատման փաստացի կարգին լավատեղյակ էին թե դասախոսները, և թե ուսանողները: Որպես ընթացիկ և ամփոփիչ գնահատման միջոցներ կիրառվում են՝ բանավոր և գրավոր հարցումները, թեստային առաջադրանքները, նախագծային աշխատանքները /վերջինս առավել շատ կիրառվում է հանրակրթական առարկաներում/: Պրակտիկաների գնահատումն իրականացվում է պրակտիկայի օրագրերի միջոցով: Պրակտիկան գնահատվում է, թե՛ պրակտիկան անցկացնող կազմակերպության (քոլեջում կազմակերպվող ներքին պրակտիկան անցնում են մարզիչների մոտ՝ սպորտային մարզումների ընթացքում) մասնագետի, թե՛ պրակտիկայի ղեկավար մեթոդիստի կողմից: Պրակտիկայի օրագրում ուսանողը կատարում է նաև իր աշխատանքների ամփոփում: Պրակտիկայի գնահատման սահմանված չափանիշներն են՝ ձեռք բերված տեսական գիտելիքների գործնական կիրառում, հանձնարարության պատշաճ և որակյալ կիրառում, աշխատանքային կոլեկտիվում շփման դրսևորում, պրակտիկայի ընթացքում պրակտիկ պարապմունքի ճիշտ կազմակերպում և այլն: Քոլեջում գործում է քննության, ստուգարքների բանավոր ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման կարգ, որը ներառված է գնահատման կանոնակարգում: Հարկ է նաև նշել, որ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մինչև օրս փաստացի բողոքարկման դեպք չի եղել:

Մասնագիտական մոդուլային ծրագրերի հարցաշարերում պարտադիր ներառված է գործնական վերլուծական հարց, որը պահանջում է սպորտային տեխնիկայի վերլուծություն, տեխնիկայի ուսուցման հաջորդականության իմացություն և այլն: Ամփոփիչ ատեստավորման հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հարցերը ունեն թե տեսական, թե գործնական բնույթ: Հարցերի կշիռները որոշ դեպքերում չեն համապատասխանում հարցի բարդությանը, իսկ հարցատոմսերը կազմված են անհամաչափ բարդությամբ, կան կրկնվող հարցադրումներ:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ն ունի հնարավորություն ամփոփիչ ատեստավորման քննության փոխարեն ուսանողներին առաջարկել նաև դիպլոմային աշխատանքների կատարում: ՄԿԾ ուսանողների և դասախոսների հետ հանդիպումների ընթացքում վերջիններս նշում էին, որ տեղեկացված չեն, որ կարող են կատարել/ղեկավարել դիպլոմային աշխատանքներ և պատրաստակամ էին հնարավորության դեպքում կատարել/ղեկավարել: Մինչ օրս քոլեջում չի եղել դիպլոմային աշխատանք գրելու նախադեպ, ԵՕՀՊՔ-ում առկա չեն ավարտական աշխատանքների կատարման, ինչպես նաև ակադեմիական ազնվության և գրագողության դեպքերին առնչվող կանոնակարգեր:

Քոլեջում իրականացվող «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ն համահունչ է այլ քոլեջներում իրականացվող նմանօրինակ կրթական ծրագրերի հետ, քանի որ ՄԿԾ-ն հաստատվում են համաձայն ՊԿՉ-ների: ԵՕՀՊՔ-ն դիտարկում է, որ ՄԿԾ-ն համահունչ է նաև Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրի հետ՝ հաշվի առնելով, որ քոլեջի շրջանավարտները ուսումնառությունը կարող են շարունակել ՀՖԿՍՊԻ-ի հեռակա բաժնի 2-րդ կուրսից: ՄԿԾ պատասխանատուների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնասիրվել է նաև ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն» կրթական ծրագիրը՝ տարբերությունների կրճատման և կրթության շարունակականության ապահովման նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրվել են նաև Ռուսաստանի Դաշնության նմանատիպ այլ քոլեջների աշխատանքները, որտեղ հիմնականում ուշադրության առարկա է եղել սպորտային մարզումների արդյունավետ համադրությունը ուսումնառության հետ, այս նպատակով նաև տեղայնացվել և թարգմանվել են մարզման տարեկան ծրագրեր տարբեր մարզաձևերի համար (2015 թ. -):

ՄԿԾ-ի շրջանակներում միջազգային փոխանակման ծրագրերում (եվրոպական կրթական տարածքում) ՄՈՒՀ-ը դեռևս իր մասնակցությունը իրատեսական չի համարում, քանի որ դեռևս պետք է հաղթահարի թե դասախոսական կազմի, թե ուսանողների լեզվի (անգլերենի) իմացության խնդիրը: ԵՕՀՊՔ-ն շարժունության համար առավել նպատակահարմար կրթական տարածք է դիտարկվում Ռուսաստանի դաշնությունը: Ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում շարժունության ծրագրերը հիմնականում դիտարկվում են ավելի շատ սպորտային տեսնակյունից: ՄՈՒՀ-ի կողմից նշվեց, որ նպատակահարմար չէ երկարաժամկետ օտարերկրյա մարզիկների ընդունումը և նրանց հետ մարզումներ անցկացնելը: Ընդգծվեց, որ անհրաժեշտ է պահպանել մարզման մեթոդիկայի ազգային առանձնահատկությունները այն մարզաձևերից, որտեղ Հայաստանը միջազգային մրցասպարեզում զբաղեցնում է առաջատար դիրքեր: ՄՈՒՀ-ը գտնում է, որ կիրառելի և փոխշահավետ ձևաչափ է տարբեր մարզաձևերից առաջատար երկրների մարզիկների հետ մարզահավաքների անցակցումը և փորձի փոխանակումը:

ՄՈՒՀ-ն ունի մշակված մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման քաղաքականություն, պետք է նշել, որ մշակված քաղաքականությունը դեռևս համակարգային ձևով չի կիրառվել: Ներկայումս ԵՕՀՊՔ-ն ՄԿԾ արդյունավետությունը գնահատելու համար իրականացնում է միայն դասալսումներ: Ինչպես պարզվեց փորձագիտական այցից, դասալսումների արդյունքերը քննարկվում են մեթոդ-միավորումներում և վերաբերում են

դասավանդման մեթոդներին: Քննարկումների արդյունքները ՄԿԾ-ում էական փոփոխությունների չեն հանգեցրել:

ԵՕՀՊՔ-ի առաջարկության հիման վրա տարանջատվել են «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառության արդյունքում շնորհվող որակավորումները՝ «Մարզիչ» և «ֆիզկուլտուրայի ուսուցիչ» առանձին որակավորումների, որի համար հիմք է ծառայել քոլեջի կողմից ռեսուրսների գնահատումը: ԵՕՀՊՔ-ն գնահատել է, որ ունի մարզաբազա տարբեր մարզաձևերի համար և կարող է այդ ուղղություններով մարզիչներ պատրաստել, իսկ ֆիզկուլտուրայի ուսուցչի պատրաստության համար չեն եղել անհրաժեշտ ենթակառուցվածքներ կրթական ծրագրի լիարժեք իրականացման համար (օրինակ՝ խաղային մարզաձևերի մարզադահլիճ):

Դատողություններ: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում քոլեջի ջանքերը «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտական ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որի նպատակով կրթական ծրագիրը աստիճանաբար բարելավվել է պետական կրթական չափորոշիչներին համահունչ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն իր մասնակցությունն է ունեցել վերջին /2021թ - / ՊԿՉ-ի լրամշակմանը և հանդես է եկել առնացքային առաջարկություններով:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ը ՊԿՉ–ի մոդուլներով սահմանված ուսումնառության արդյունքներին համապատասխան մշակել է մոդուլային ծրագրերի դասավանդման նյութերը, ինչպես նաև այն, որ կրթական ծրագրում կատարված բարեփոխումների արդյունքում ընդհանուր առմամբ ավելացվել է գործնական ժամերի տեսակարար կշիռը: ԵՕՀՊՔ-ում ուսումնառությանը զուգահեռ իրականացվում են 2-անգամյա մարզումներ, որի շրջանակներում ուսանողները կատարելագործում են իրենց մարզաձևի վերբերյալ գործնական գիտելիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մասնագիտություն» մոդուլային ծրագրի շրջանակներում տեսական ժամերի պահպանման մոտեցումներն արդարացված են, քանի որ քոլեջի սաները հիմնականում բարձրակարգ մարզիկներ են, իսկ ուսումնառության տարիները համընկնում են բարձր նվաճումների, սպորտում մարզական կատարելագործման տարիների հետ: Փորձագիտական այցի ընթացքում շահակիցները բազմիցս նշում էին, որ ուսանողները առավել լավ են տիրապետում մասնագիտությանը գործնական հմտությունների մակարդակում, հիմնականում դժվարանում են վերարտադրելու, շարդարելու և բանավոր ներկայացնելու գործում, ուստի փորձագիտական խումբը կարևորում է մարզիկ ուսանողների մոտ մասնագիտական խոսքի, գործնական գիտելիքների և տեսական գիտելիքների փոխկապակցման հմտությունների ձևավորմանը նպատակաուղղված ՄՈՒՀ-ի աշխատաքները:

Դրական է, որ մոդուլային ծրագրերը /նկարագրերը/ մանրակրկիտ մշակված են մեկ ընդհանուր ձևաչափի համաձայն, սակայն բովանդակային առումով փաստաթղթերը բարելավման կարիք ունեն, մասնավորապես՝ դասավանդման նյութերի (դասախոսությունների) համար օգտագործված գրականության ցանկը և հանձնարարվող հիմնական և լրացուցիչ գրականության մասին հավելյալ տեղեկատվությունը: Այս մոտեցումները կօգնեն, որպեսզի քոլեջում ներդրվի ակադեմիական ազնվության

քաղաքականությունը, որն առաջին հերթին պետք է արտահայտվի դասախոսների աշխատանքներում, որպեսզի որպես մշակույթ նաև տարածում գտնի ուսանողների շրջանում: Փորձագիտական խումբը դրական է համարում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն կանոնակարգի առկայությունը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության մեթոդների քարտեզագրումը ըստ ՄԿԾ վերջնարդյունքների և փոխկապակցումը գնահատման մեթոդների հետ, սակայն հարկ է նշել, որ կանոնակարգը դեռևս լիարժեք ներդրման կարիք ունի: Անհրաժեշտ է ուշադրություն հատակացնել թե ինչպիսի ռեսուրսներ են անհրաժեշտ նախանշված մեթոդների կիրառության համար: Նմանօրինակ քարտեզագրումը կարող է նպաստել նաև կրթական ռեսուրսների կարիքների բացահայտմանը (այդ թվում մասնագիտական գրականության և ՏՏ միջոցների) և ուղղորդված համալրմանը: ՄՈՒՀ-ում առկա ՏՏ ռեսուրսը և ժամանակակից սարքավորումների քանակը դեռևս բավարար չեն ՄՈՒՀ-ի կողմից նախանշված ինտերակտիվ մեթոդներով դասավանդում իրականացնելու և դրանց միջոցով անհրաժեշտ ուսումնառության արդյունքների ձեռբերման համար: Դրական է, որ այս ուղղությամբ կատարվել են որոշ համալրումներ, օրինակ՝ համակարգիչների ձեռքբերում (փորձագիտական այցի ընթացքում դրանք դեռևս չէին շահագործվում): Փորձագիտական խումբը գտնում է, որ առաջիկայում համալրման արդյունքները կարող են տեսանելի կերպով բարելավել ՄՈՒՀ-ի կրթական գործընթացը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ երկրորդ կուրսից սկսած ուսանողները մասնակցում են տարբեր պասիվ և ակտիվ պրակտիկաների, որոնց համակարգումը իրականացվում է պրակտիկայի բաժնի կողմից: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ պրակտիկաները բավականին արդյունավետ են՝ հատկապես շեշտադրվեց մարզադպրոցներում իրականացվող ուսումնամարզական պրակտիկան: Բացի կրթական ծրագրում ներառված պրակտիկայից, մարզիկ ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու մրցավարական աշխատանքներին, որը ուսանողների գնահատմամբ անհրաժեշտ գիտելիք է ապագա մարզիչների համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ի կրթական միջավայրը իր հերթին նպաստում է քոլեջում անցկացվող պրակտիկաների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, այստեղ էական դեր ունի նաև հանրակրթական դպրոցի առկայությունը, որի շնորհիվ ուսանողները պրակտիկայի ընթացքում հնարավորություն են ունենում կրտսեր տարիքի մարզիկների հետ մարզումներ անցկացնելու և իրենց մարզական վարպետությունը փոխանցելու: Այս տեսանկյունից գործընթացի արդյունավետ կազմակերպումը կարևոր է քոլեջի համար, քանի որ հանրակրթական բաժնի սովորողների մի մասը հետագայում կրթությունը շարունակում են քոլեջում:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի գործող գնահատման կանոնակարգ, որտեղ պարզաբանվում է նաև բողոքարկման կարգը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ փաստացի բողոքարկման դեպքեր քոլեջում չեն եղել, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ բողոքարկման հնարավոր դեպքերը լուծվում են դասախոս ուսանող երկխոսության արդյունքում: Փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման կանոնակարգը լրամշակման կարիք ունի՝ մասնավորապես հստակեցնելու, թե որ դեպքերում են կիրառվում թեստային աշխատանքը, ստուգարքը, տարբերակված ստուգարքը, բանավոր

/գրավոր քննությունը: Կանոնակարգում պարզաբանված չէ նաև գնահատման մեթոդների ընտրության սկզբունքները, ինչպես նաև առաջիկայում պետք է ուշադրություն հատկացվի գնահատման բաղադրիչների (ռուբրիկների) ներդրմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ կրթական ծրագրի համար կարևոր փաստաթղթային հենքը ապահովված է (օրինակ մոդուլային ծրագրեր, քարտեզագրումներ), սահմանված են նաև կրթական ծրագրի վերջնարդյունքերը: Փորձագիտական խումբը գտնում է, որ միասնական փաստաթղթի առկայությունը նաև դրական հենք կհանդիսանա հետագայում կրթական ծրագրի բենչմարքինգ իրականացնելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կատարել է այլ միջին մասնագիտական համանման կրթական հաստատությունների աշխատանքների և ծրագրերի որոշակի ուսումնասիրություններ (ՌԴ Օլիմպիական հեթափոխի քոլեջների հետ), սակայն այս գործընթացները փաստաթղթավորված չեն եղել մինչ օրս: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջն ունի հստակ կողմնորոշում ԱՊՀ կրթական տարածքում գործող համանման ուսումնական հաստատությունների հետ մարզական փորձի փոխանակման և համագործակցության հնարավորություններ ստեղծելու համար, մյուս կողմից նաև եվրոպական կրթական տարածքը դիտարկվում է որպես լավագույն փորձի ուսումնասիրության առարկա: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի ներդրված ՈԱ մեխանիզմներ կրթական ծրագրի մշտադիտարկման և հետագա գնահատման համար, այս մեխանիզմների մշակումը և գործարկումը հրատապ է ՄՈՒՀ-ի համար, երկարաժամկետ հեռանկարում դրանց բացակայությունը կարող է ռիսկեր ստեղծել կրթական ծրագրերի իրականացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով մասնագիտական կրթական ծրագրի համապատասխանությունը Պետական կրթական չափորոշիչին, ուսումնական պլանների, առարկաների ու մոդուլների փոխկապակցված քարտեզագրումը ուսումնառության վերջնարդյունքների, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հետ, պրակտիկաների և գործնական ժամերի ավելացումը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում ուսանողակենտրոն մոտեցումները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ-ում ընդունելությունը կատարվում է հիմնական ընդհանուր կրթություն

ունեցող անձանց դիմումներով, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային հիմունքներով:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական հանդիպումների արդյունքների՝ ընդունելության ժամանակ քոլեջի կողմից կարևորվում են նաև դիմորդի մարզական արդյունքները և մարզադպրոցների կողմից նրանց ներկայացվող բնութագրերը: Նախապատվությունը տրվում է մանկապատանեկան մարզադպրոցների, մասնագիտացված մանկապատանեկան օլիմպիական հերթափոխի դպրոցների՝ մարզական առումով խոստումնալից սաներին:

Դիմորդների հավաքագրման նպատակով ԵՕՀՊՄՔ-ն համագործակցում է տարբեր հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների հետ՝ իրականացնելով պլանավորված մասնագիտական շրջայցեր և ներկայացնելով քոլեջի հնարավորությունները, կրթական ծրագիրն ու իր մարզաձևերը: ՄՈՒՀ-ի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջում հրապարակվում են անհրաժեշտ տեղեկատվություն ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ: ԵՕՀՊՔ-ն ունի նաև հարակրթական մարզական դպրոց 7-12-րդ դասարաններում, դպրոցի սաներից շատերը 9-րդ դասարանից հետո տեղափոխվում են քոլեջ՝ ձեռք բերելով մարզիչի որակավորում:

Պետք է փաստել, որ վերջին տարիներին գրանցվել է դիմորդների աճ՝ 2020թ.-ին կազմելով 149-ը, իսկ 2022թ-ին՝ 220: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դիմորդների աճի հիմնական գործոններից մեկը համարվում է նոր կառուցված հանրակացարանային շենքը, որը հնարավորություն է տալիս մարզերից եկած ուսանողներին ապահովելու գիշերակացով: Այս հնարավորությունից օգտվում են հանրակրթական բաժնի և քոլեջի մոտ 170 ուսանողներ: Հանրակացարանը կառուցված և կահավորված է ուսանողների բոլոր կարիքներին համապատասխան:

Քոլեջում գործում են ուսանողների կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ: Քոլեջում գործում է նաև առաջարկությունների և բողոքների արկղ, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն իրենց խնդիրներն ու առաջարկները ներկայացնել անանուն ձևով: Պետք է նաև փաստել, որ այս մեխանիզմն այդքան էլ մեծ տարածում չի գտել ուսանողների շրջանում, պայմանավորված նրանով, որ ուսանողների հիմնական խնդիրները լուծվում են առաջնային օղակներում՝ մարզիչների և դասախոսների հետ: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, մարզիչները, որոնք անմիջականորեն շփման մեջ են ուսանողների հետ և կարողանում են բացահայտել ուսանողների առաջնային կարիքները և իրենց հնարավորությունների շրջանակում աջակցել, բացի այդ, ուսանողները ամենամյա հանդիպումներ են ունենում քոլեջի ղեկավար կազմի՝ ի դեմս տնօրենի հետ, անմիջական երկխոսությունը նույնպես հնարավորություն է տալիս առկա կարիքները վերհանելու և դրանց լուծումներ գտնելու համար:

Ուսանողների կարիքների վերհանմանը նպաստում է նաև քոլեջի Ուսանողական խորհրդը: Հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կառույցի միջոցով դիմել են տրամադրվող սննդի բարելավման և ճաշարանի վերանորոգման համար: Վեր հանված խնդիրը լուծվել է տնօրինության աջակցության շնորհիվ: Սննդի բարելավում եղել է ինչպես որակապես, այնպես էլ համակարգվել է մարզիկներին անհրաժեշտ նյութերով հարուստ կալորիապես հաշվարկված 3-անգամյա սննդակարգի ապահովումը, քոլեջի սննդաբանի

(դիետոլոգ) կողմից:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեկ այլ մեխանիզմներից է նաև դասախոսների, կարգավարների /կուրսղեկների/ հետ ընթացիկ հաղորդակցումը և Որակի ապահովման և Կարիերայի կենտրոնի պատասխանատուների կողմից անցկացված մեկանգամյա հարցումը: Քոլեջում իրականացվում են նաև կարիքների բացահայտման անհատական նախաձեռնություններ, ինչպիսիք են օրինակ քոլեջի հոգեբանի կողմից անցկացվող հոգեբանական թեստերը:

Պետք է փաստել, որ ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կարիքների վերհանման վերոնշյալ մեխանիզմները դեռևս չեն վերածվել հստակ ընթացակարգերի:

ԵՕՀՊՄՔ-ն ուսանողներին աջակցելու նպատակով կազմակերպում է խորհրդատվություններ և լրացուցիչ պարապմունքներ: ՄՈՒՀ-ում լրացուցիչ խորհրդատվություններ տրամադրվում են քննություններից, ստուգարքներից կամ այլ ամփոփիչ աշխատանքներից առաջ, խորհրդատվությունները տրամադրվում են դասախոսների կողմից: Պետք է փաստել նաև, որ սպորտային միջոցառումներին (մարզահավաքներ, ՀՀ առաջնություններ, մրցաշարեր, միջազգային մրցումներ) մասնակցությամբ պայմանավորված քոլեջի մարզիկ ուսանողներն ունենում են մեծաքանակ (պլանային, հարգելի) բացակայություններ, որոնք ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, լրացվում են անհատական խորհրդատվությունների և հանձնարարականների միջոցով ուսանողների և դասախոսների նախաձեռնությամբ: Խորհրդատվական այս պարապմունքների անցկացումը դեռևս հստակ կանոնակարգված չէ, իսկ արդյունավետությունը՝ գնահատված:

Քոլեջի կողմից լրացուցիչ պարապմունքներ կազմակերպվում են նաև ուսանողների բարձրացրած կարիքների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջ ընդունվում են օտար լեզվի իմացության ցածր մակարդակով, իսկ ծրագրով սահմանված ժամաքանակը, ըստ ներքին շահակիցների, բավարար չէ անգլերենին տիրապետելու համար: Ուսանողների օտար լեզվի իմացության խնդիրը ակնառու է դառնում տարբեր երկրներում մրցաշարերին մասնակցելու ընթացքում: Խնդիրը որոշակիորեն մեղմելու համար ԵՕՀՊՄՔ-ն նախաձեռնել և կազմակերպել է անգլերենի անվճար պարապմունքներ, որին մասնակցել են մոտ 20 ուսանող: Պետք է փաստել, որ օտար լեզվի իմացությանը նպաստող պարապմունքները ըստ նախատեսված ծրագրի եղել է մեկանգամյա, իսկ պարապմունքների արդյունավետությունը քոլեջի կողմից դեռևս գնահատված չէ:

Պետք է նաև նշել, որ դասապատրաստում է կազմակերպվում քոլեջի հանրակացարանի ուսանողների համար: Դասապատրաստումն իրականացվում է հանրակրթական կրթամասի առարկաների համար:

Քոլեջի ուսանողները լրացուցիչ խորհրդատվություն են ստանում նաև իրենց մարզիչների կողմից տարբեր մրցաշարերի մասնակցելուց առաջ, այսպիսի խորհրդատվություններն ապահովում են մարզիկների մարզական արդյուքների առավել լավ դրսևորմանը և մրցաշարերից առաջ հոգեբանական լարվածության թուլացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում կա նաև մեկ սպորտային հոգեբան, ով նույնպես որոշակի հոգեբանական աջակցություն է ցուցաբերում ուսանողներին, սակայն,

ինչպես փաստում են ներքին շահակիցները, մեկ սպորտային հոգեբանը բավարար չէ բոլոր ուսանողներին լիարժեք հոգեբանական խորհրդատվություն տրամադրելու և մրցաշարերից առաջ հոգեբանական գերլարվածությունը մեղմելու համար:

ԵՕՀՊՄՔ-ում դեռևս առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ցանկացած պահի, բացի դասաժամերից և մարզումներից, կարող են դիմել վարչական աշխատակազմին և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանը կամ գտնել առաջացած խնդրի լուծումը: Ինչպես արդեն նշվել էր վարչական անձնակազմին դիմելու արդյունքում վերանորոգվել է ճաշարանը և բարելավվել է տրամադրվող սննդի որակը:

Քոլեջում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցմամբ զբաղվում է Կարիերայի կենտրոնը, որը գործում է 2022 թվականի մայիսից: Կառույցն իր գործունեությունը ծավալում է սահմանված կանոնակարգով և առաջնորդվում է տարեկան աշխատանքային պլանով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս կառույցն աշխատանքներ է տանում շրջանավարտների զբաղվածության 5 տարվա բազան ձևավորելու ուղղությամբ: Շրջանավարտների հետ կապը հետագայում պահպանելու են հեռախոսազանգերի և ֆեյսբուքյան էջերի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում շեշտադրվեց, որ բազայում ներկայումս ընգրկված է մոտ 100 շրջանավարտ, որից մոտ 50%-ն աշխատում են իրենց մասնագիտությամբ: Պետք է փաստել նաև, որ քոլեջը իր շրջանավարտների համար կարող է նաև աշխատավայր հանդիսանալ (մարզիչներից 30-ը ԵՕՀՊՄՔ-ի շրջանավարտներն են):

Ուսանողները ապագա գործատուին ներկայանալու համար «Աշխատանքային ընդհանուր գործունեություն» առարկայից անցկացվում են ինքնակենսագրական գրելու դասընթացներ, պետք է փաստել, որ ինքնակենսագրականները ձևաչափային բարելավման կարիք ունեն (ձեռագիր են, առկա չէ հստակ և համակարգային ձևաչափ):

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ մարզիչները նաև անհատական աշխատանքներ են տանում ուսանողների հետ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, օրինակ ուղղորդելով կրթությունը բուհում շարունակելու հարցում, կամ մարզիչները իրենց անհատական նախաձեռնությամբ օգնել են շրջանավարտներին մասնագիտությամբ աշխատանք գտնելու հարցում:

Ուսանողների մասնագիտական հետաքրքրությունները խթանելու նպատակով քոլեջի կողմից հրավիրվում են հայտնի հյուրեր մարզական ոլորտից: Քոլեջը նպատակ ունի այսպիսի միջոցառումները հաճախակի դարձնել ուսանողների մոտիվացիան բարձրացնելու և փորձի փոխանակման նպատակով:

ԵՕՀՊՄՔ-ում ուսանողների հետազոտական-վերլուծական աշխատանքները դրսևորվում են միայն անհատական աշխատանքների, ռեֆերատների և որոշ մարզաձևերի (ֆուտբոլ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո) դեպքում մրցաշարերի վերլուծությունների տեսքով: Ռեֆերատների միջոցով ուսանողները ծանոթանում են աշխարհահռչակ մարզիկների ինքնակենսագրականներին և սպորտաձևերի ծագմանը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ռեֆերատներն իրենց մեջ վերլուծական տարրեր չեն պարունակում, նաև այն, որ ներկայումս ռեֆերատներ չեն հանձնարարվում: Երբեմն ուսանողներին հանձնարարվում են նախագծային աշխատանքներ, որոնք սակավաթիվ են:

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը գործում է ընդհանուր հանրակրթական դպրոցի հետ համտեղ: Խորհուրդը հանդիսանում է ինքնակառավարվող մարմին և գործում է իր կանոնադրության համաձայն: Ուսանողական խորհրդի անդամներ են հանդիսանում յուրաքանչյուր կուրսից/դասարանից (հանրակրթական դպրոցի և քոլեջի ՈւԽ-ն մեկն է) մեկ ներկայացուցիչ: Ներկայացուցիչները ընտրվում են յուրաքանչյուր կուրսի ուսանողների ընդհանուր քննարկմամբ և առաջադրված թեկնածուին ներկայացնում են ՈՒԽ գործող նախագահին, ով հաստատում է լսարանի ներկայացուցչի թեկնածությունը: Ներկայումս ՈՒԽ-ն բաղկացած է 17 անդամներից: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, քանի որ ուսանողների առաջնային խնդիրները լուծվում են մարզիչի, դասախոսի և կարգավարի մակարդակում, ապա ՈւԽ-ին ուսանողները հիմնականում դիմում են լրացուցիչ պարապմուքների (անգլերենի պարապմուքներ), մշակութային միջոցառումների կազմակերպման հարցերով, որում իրենց աջակցում են նաև դասախոսները:

Քոլեջում առկա չեն տրամադրվող խորհրդատվությունների, լրացուցիչ պարապմունքների արդյունավետությունը գնահատող հստակ մեխանիզմներ: Կրթական ծառայությունների արդյունավետությունը գնահատելու համար իրականացվել է մեկանգամյա հարցում: Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հարցումների բովանդակությունը և վերլուծությունը ամբողջապես հնարավորություն չեն ընձեռում հասկանալու ուսանողների բավարվածության աստիճանը, ինչպես նաև թույլ չեն տալիս դուրս բերելու բարելավման հստակ ուղղություններ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի ընդունելությունը հստակ կանոնակարգված է, բացի այդ ընդունելության ժամանակ հաշվի են առնում նաև դիմորդի գրանցած մարզական արդյուքները, ինչը դրական է, քանի որ քոլեջը հստակ ընդգծել է, թե ինչպիսի ուսանող է ցանկանում ունենալ: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ԵՕՀՊՄՔ-ի քայլերը դիմորդների ներգրավվման ուղղությամբ: Վերջին տարում նկատվում է դիմորդների աճ, որը հիմնականում պայմանավորված է քոլեջի ռեսուրսային բազայի վերազինմամբ և ուսանողներին տրամադրվող ծառայությունների բարելավմամբ՝ հանգեցնելով դիմորդների հետաքրքրության մեծացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ՝ մարզիչների հետ զրույցներ, ղեկավար կազմի հետ հանդիպումներ, առաջարկությունների արկղիկ և այլն: Միևնույն ժամանակ առկա չեն արդյունավետության գնահատումներ, որոնք թույլ կտային հասկանալ այդ մեխանիզմների արդյունավետությունը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ ուսանողները ցանկացած պահին կարող են դիմել վարչական անձնակազմին և ստանալ իրենց հարցերի պատասխանները, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ հստակ ժամանակցույցի ներդրումը գործընթացը կդարձնի առավել համակարգային և թույլ կտա դուրս բերել տվյալներ և իրականացնել վերլուծություններ:

Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ Ուսանողական խորհուրդ, սակայն կառույցը հիմնականում զբաղվում է մշակութային միջոցառումների կազմակերպմամբ, երբեմն էլ

ռեսուրսային կարիքի բացահայտմամբ, որը կարող է հանգեցնել նրան, որ ուսանողները ՈՒԽ-ին չընդունեն որպես ուսանողների իրավունքները բարձրաձայնող և պաշտպանող կառույց:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում ուսանողներին տրամադրվում են խորհրդատվություններ: Խորհրդատվությունների դերն այս ուսումնական հաստատության համար առավել ընդգծված է, քանի որ ուսանողներն ունենում են մեծաքանակ (պլանային, հարգելի) բացակայություններ: Գործընթացը հստակ կանոնակարդգված չէ, որը կարող է խոչընդոտել ուսանողների բաց թողնված նյութերի լիարժեք յուրացմանը:

Փորձագիտական խումբը ողջունում է քոլեջի ջանքերը օտար լեզվի իմացության բարձրացման նպատակով կազմակերպած լրացուցիչ դասընթացը, որը կարող է նպաստել ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, սակայն անհրաժեշտ է նշել, որ լրացուցիչ դասընթացի արդյունավետությունը դեռևս գնահատված չէ, որը կարող է հանգեցնել ուսանողների հետաքրքրվածության նվազմանը դասընթացի նկատմամբ:

Փորձագիտական խմբի համար դրական է, որ ՄՈՒՀ-ում ուսանողներին տրամադրվող ծառայությունները գտնվում են ղեկավար կազմի ուշադրության կենտրոնում, որը նպաստում է ուսանողի կրթություն ստանալու իրավունքի լիարժեք իրացմանը, ուսանողների առողջության պահպանմանը, մարզական և կրթական գործընթացների արդյունավետության ապահովմանը:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ ԵՕՀՊՄՔ-ն չունի հստակ գործիքակազմ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, որը կարող է վտանգել ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունների ձևավորումը և զարգացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում Կարիերայի ստորաբաժանման ներդնումը, դրական է, որ կարճ ժամանակահատվածում կառույցը ունի հստակ պլանավորում և իրականացրել է որոշակի աշխատանքներ, որոնցից են շրջանավարտների բազայի ձևավորումը: Բազայի առկայությունը հնարավորություն կտա ուսումնական հաստատությանը գնահատել կրթական ծրագրի արդյունավետությունը և հետևել շրջանավարտի մասնագիտական հետագիծը: Դրական է, որ կրթական ծրագրի «Աշխատանքի ընդհանուր գործունեություն» մոդուլի շրջանակներում ուսանողները սովորում են՝ ինչպես ներկայանալ գործատուներին, գրել ինքնակենսագրականներ և այլն: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս դասընթացի շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքների ձևաչափերն անհրաժեշտ է համապատասխանեցնել աշխատաշուկայում ընդունված ձևաչափերին, որը թույլ կտա ուսանողներին դասընթացի ընթացքում ձևավորված ինքնակենսագրականները հետագայում կիրառության մեջ դնել աշխատաշուկայում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման միջոցներ, լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների տրամադրման ծառայություններ, ուսանողներին տրամադրվում են գիշերակացի և սննդի տրամադրման հնարավորություններ, ուսանողները կարող են ազատ դիմել վարչական աշխատակազմին, գործում է ուսանողների իրավունքների

պաշտպանության մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Դասախոսական կազմի ընտրության ժամանակ հաշվի են առնվում անձի մասնագիտական որակների համապատասխանությունը դասախոսի պաշտոնի անձնագրին, ներկայումս դասախոսական կազմի ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով, այդ թվում նաև թափուր տեղի համար: Ընդունելությունն իրականացվում է բանավոր քննությամբ՝ հաշվի առնելով մասնագիտական և մանկավարժական աշխատանքային փորձը:

Քոլեջի մարզիչ դասախոսներից շատերը եղել են քոլեջի նախկին շրջանավարտներ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր տեղեր լինելու դեպքում քոլեջը հրավիրում է իր շրջանավարտներին: Նոր ընդունվող դասախոսի հետ կնքվում է նախանական 3-ամսյա պայմանագիր, ապա՝ անժամկետ:

Քոլեջի ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային գործառույթներն առավել շատ կապված են ոչ կրթական՝ այլ սպասարկման աշխատանքների հետ, ուստի աշխատակիցների ընտրությունը կատարվում է առանց մրցույթի:

Ինչպես նշվեց, քոլեջում առկա է դասախոսի պաշտոնի անձնագիր, որտեղ նկարագրված է դասախոսի գործունեության շրջանակը, իրավունքները և պարտականությունները, պահանջները գիտելիքների և հմտությունների նկատմամբ: Պաշտոնի անձնագրում ավելի մեծ ուշադրություն է հատկացված ոլորտային օրենքների և կանոնակարգերի, առարկայական չափորոշիչների իմացությանը, մանկավարժության տեսության և մեթոդիկայի իմացությանը ընդհանրապես և այլն, սակայն չկան նշումներ հատուկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ:

Չնայած վերը նշվածին մասնագիտական առարկաները դասավանդում են պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ, ներկայումս դասախոսներից 3-ը տարբեր մարզաձևերից ՀՀ հավաքականների մարզիչներ են, 8-ն ունեն ՀՀ վաստակավոր մարզիչի կոչում, համատեղությամբ աշխատում են մարզադպրոցներում: Այս առումով քոլեջի մարզիկ ուսանողների ցուցաբերած արդյունքները որոշակիորեն վկայում են կրթական գործընթացում բարձրակարգ մարզիչ մանկավարժների ներգրավածության վերաբերյալ:

Քոլեջում գիտական աստիճան և կոչում ունեն 2 դասախոս, հարկ է նշել, որ նրանք դասավանդում են ոչ մասնագիտական առարկաներ:

ՄՈՒՀ-ում կան որոշակի ներքին մեխանիզմներ դասավանդող անձնակազմի և մարզիչ-մանկավարժների աշխատանքների պարբերական գնահատման համար:

Քոլեջում մշակվել է «Դասախոսական կազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման կանոնակարգ» (2021 թ.)՝ նպատակ ունենալով իրականացնել դասախոսական անձնակազմի բազմակողմանի գնահատում և նպաստել դասախոսական կազմի որակավորման շարունակական աճին: Քոլեջի Որակի ապահովման բաժնի կողմից (նորաստեղծ կարերայի բաժնի աջակցությամբ) կանոնակարգի ընդունումից հետո դեռևս մեկ անգամ իրականացրել է հարցումներ ուսանողների հետ՝ դասախոսի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ: Հարցման արդյունքները քննարկվում են ստորաբաժանումների ղեկավարների հետ, այնուհետև մանկավարժական խորհրդի նիստում, հարկ է նշել, որ հարցումը կազմակերպվել է դեռևս մեկ անգամ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արդյուքների քննարկումների ժամանակ ավելի շատ ուշադրություն է հատկացվել համեմատաբար ցածր գնահատված դասախոսների տվյալներին: Հայտնի դարձավ նաև, որ դասախոսները նախապես հնարավորություն են ունեցել ծանոթանալու ուսանողներին տրվողհարցաշարին:

Քոլեջում դասախոսների գնահատման համար ավելի գործուն և պարբերականություն ունեցող մեխանիզմ են դասալսումները, որի համար կա հստակ առանձնացված ժամանակացույց: Դասալսումներն իրականացվում են միջին մասնագիտական բաժնի ղեկավարի և ուսումնադաստիարկչական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից, ամփոփվում են արձանագրություններով, իսկ արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցում են բոլոր դասախոսները, իսկ դասալսումների արդյունքների հիման վրա հնարավորություն է եղել ուղորդել սկսնակ դասախոսներին դասվանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում: Դասալսման արդյուքները համադրվում են դասախոսի գնահատման թերթիկի հետ: Հարկ է նշել, որ մի շարք դասալսումներ է իրականացվել նաև ՈԱ պատասխանատուի կողմից, սակայն դասալսման արձանագրություններ չեն կազմվել:

Մարզիչ դասավանդողների աշխատանքի գնահատման համար նաև հիմք են ծառայում տարվա ընթացքում մարզիկների ցուցաբերած արդյունքները: Քոլեջում գործում է նաև մարզչական խորհուրդներ և կան յուրաքանչյուր մարզաձևից նշանակված ավագ մարզիչներ:

Ինքնավերլուծության տվյալներով, վերջին երեք տարիներին ԵՕՀՊՄՔ-ի դասախոսները, վարչական աշխատողները վերապատրաստվել են տարբեր ծրագրերով, որոնք կազմակերպվել են ՄԿՈՒԶԱԿ-ի, «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմանդրամի (ՈԱԱԿ), ինչպես նաև «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության և «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի կողմից:

Մարզիչ-դասախոսները մասնակցություն են ունեցել ՀՖԿՍՊԻ -ում կազմակերպվող մարզիչ մանկավարժների մասնագիտական վերպատրաստման դասընթացներին: Փորձագիտական հանդիպումների ընթացքում դասախոսները նշում էին, որ ունեն մասնագիտական վերապատրաստումների կարիք, սակայն այդպիսի վերպատրաստումները

շատ սակավ են, որոնց կարող են մասնակցել, իսկ համացանցային տիրույթում չեն որոնել հնարավոր հեռավար վերապատրաստման տարբերակներ։ Դասախոսական կազմի վերպատրաստման կարիքների վեր հանում, ուսումնասիրություն որպես այդպիսին ՄՈՒՀ-ը չի իրականացնում, սակայն տեղի են ունենում որոշակի բանավոր քննարկումներ և կարծիքների փոխանակում, օրինակ՝ դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասախոսները հնարավորության դեպքում մասնակցում են տարբեր վերապատրաստումների, ինքնուրույն նախաձեռնությամբ (օրինակ ֆուտբոլի դասախոսը մասնակցել է ՈՒԵՖԱ հրանգիչների (վճարովի) սեմինար-վերպատրաստմանը, հանդիսանում է Բ կարգի հրահանգիչ)։ Այցից պարզ դարձավ նաև, որ անհատական գործընկերային կապերի շրջանակներում քոլեջի ղեկավար անձնակազմը նույնպես փորձում է կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական կազմի համար, օրինակ՝ ներառական կրթության վերաբերյալ։ Այսպիսի վերապատրաստումների կարիքը գնահատված չէ։

Մարզիչ դասախոսները նշում էին որ իրենց մասնագիտական գիտելիքների կատարելագործման համար հարթակ են հանդիսանում նաև մարզահավաքները և մրցումները, որտեղ տեղի է ունենում առաջավոր փորձի փոխանակում ինչպես Հայաստանի այնպես էլ արտասահմանցի գործընկերների հետ։

Քոլեջում աշխատում են 10 և ավելի տարիների աշխատանքային փորձ ունեցող դասավանդողներ, որիից 2-ն ունեն գիտական աստիճան և կոչում, իսկ 4-ը ՀՀ վաստակավոր մարզիչներ են։ Դասավանդողների մեծամասնության համար քոլեջը հանդիսանում է հիմնական աշխատավայր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում աշխատավարձը ցածր է, որը երբեմն պատճառ է հանդիսանում կադրերի հոսունության համար։ Առաջացող թափուր տեղերի համար տրվում է հայտարարություն և ըստ կանոնակարգի անցկացվում է մրցույթ (վերջինը եղել է 2022-2023 ուստարվա հեծանվային սպորտի մասնագետի համար թափուր տեղի մրցույթը)։ Քոլեջը դեռևս չունի հիմնական դասախոսական կազմի կայունությունն ապահովող հստակ մշակված քաղաքականություն։

Քոլեջում ընդունվել է «Քոլեջի վարչական, դասախոսական, մարզչական աշխատողների գնահատման, խրախուսման կանոնակարգը» (2021թ -)։ Կանոնակարգը սահմանում է, թե որ դեպքերում է խրախուսվում աշխատակիցը և ինչ ձևով։ Ներքին շահակիցների հետ հանդիպումների ընթացքում պազվեց, որ եղել են խրախուսման դեպքեր, օրինակ՝ յուրաքանչյուր տարի դասախոսներն իրենցից ընտրում են լավագույն դասախոս՝ կարևորելով թեկնածուի մասնագիտական և մարդկային որակները, հաղթողը պարգևատրվում է շնորհակալագրով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մի քանի տարի առաջ եղել են նաև նյութական խրախուսումներ, ներկայումս վերանորոգման ծախսերի հետ կապված ֆինանսական խրախուսումներ չեն լինում։

ԵՕՀՊՄՔ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ իր առաքելության և նպատակների իրականացման համար, որը ձևավորվում է քոլեջի կանոնադրությամբ, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված հաստիքացուցակով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների ղեկավարները չունեն

օժանդակող անձնակազմ (օրինակ լաբորանտ), քանի որ հաստիքացուցակով նախատեսված չէ, միևնույն ժամանակ միջին մասնագիտական բաժնի ղեկավարն ունի բավականին հագեցած ուսումնական և վարչական բեռնվածություն և որոշ փաստաթղթերի (մեթոդական խորհրդի արձանագրությունները, դասալսման արձանագրությունները միայնակ վարում է մատյաններում ձեռագիր) մշակման և էլեկտրոնային ձևով պահպանման համար չունի հավելյալ ժամանակ:

Ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային օրակարգի մեջ է մտնում նաև ԿԳՄՍ նախարարությունից ստացվող հանձնարարականների կատարումը:

Բուժ-վերականգնողական բաժնի գործունեությունը հիմնականում կապված է սպորտային մարզման կանոնակարգված սանիտարահիգիենիկ ապահովմանը և մարզիկներին ցուցաբերվող առաջնային օգնությանը, առողջության պահպանմանը, պլանային ստուգումների և դիսպանսերիզացիայի միջոցով, որի համար կա համապատասխան որակավորումներ ունեցող անձնակազմ: Բուժ-վերականգնողական բաժինը նաև մասնակցում է ընդունելության գործընթացին, նախնական եզրակացություն տալով մարզիկների առողջական վիճակի մասին, ըստ սպորտով զբաղվելու ցուցանիշի:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքների արդյունավետության գնահատումը և նրանց մասնագիտական առաջընթացին ուղղված կարիքների վերհանումը դեռևս պլանավորման փուլում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի դասախոսական անձնակազմի ընտրության գործող քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը: Աշխատանքի ընդունման տեսակետից քոլեջը հնարավորինս հետամուտ է բանիմաց և ոլորտային աշխատանքային ստաժ ունեցող մասնագետների ներգրավմանը՝ հատկապես փորձառու մարզիչներին: Կարևոր է, որ բավականին մանրակրկիտ մշակված է դասախոսի պաշտոնի անձնագիրը, սակայն առավել արդյունավետ կլիներ, եթե որդեգրված մոտեցումները նաև տեղ գտնեին մասնագետին ներկայացվող պահանջներում, մասնավորապես՝ նշված լինի, թե ինչպիսի մասնագիտական գիտելիք է անհրաժեշտ տվյալ մոդուլային ծրագրի դասավանդման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրված են դասախոսական անձնակազմի պարբերական գնահատման ընթացակարգեր, գործում են մի քանի մեխանիզմներ: Իրականացվում են պարբերական դասալսումներ, իսկ ուսանողների կողմից կատարված գնահատման մեխենաիզմները արդեն իսկ ձևավորված են, սակայն դեռևս ԵՕՀՊՄՔ-ն կարիք ունի ներդնելու հարցումների արդյունքների գնահատման վերլուծական բաղադրիչը՝ դասախոսների կարիքների վերհանման և նրանց անհրաժեշտ վերպատրաստումների կազմակերպման և անցկացման գործիք կիրառելու համար: Դրական է նաև, որ մարզիչների աշխատանքը գնահատվում է որպես կթական գործընթացի բաղադրիչ մաս՝ ըստ մարզիկների ցուցաբերած արդյունքների:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի դասախոսական կազմը պարբերաբար մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին, սակայն կարիքների վրա հիմնված մասնագիտական

վերապտարաստումներ քոլեջի կողմից չեն կազմակերպվել: Դրական է, որ դասախոսական անձնակազմն ունի կայուն հետաքրքրվածություն մասնագիտական որակների բարձրացման նկատմամբ, վերջինս արտահայտվում է նաև նրանց նախաձեռնողականությամբ, իսկ հնարավորության դեպքում նաև հրավիրում են վերապատրաստող գործընկերների՝ մյուս դասախոսներին նույնպես ներգարվելով գործընթացում: Բացի վերապտրաստումները, քոլեջում ակտիվ կազմակերպվում են միջառարկայական բաց դասեր, որտեղ ներգրավվում են թե դասախոսները, թե ուսանողները: Քոլեջում ակտիվ շեշտադրվում է օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը հետագա զարգացման տեսանկյունից, սակայն քոլեջն ունի սահմանափակ ֆինանսական միջոցներ այս ուղղությամբ ծախսեր իրականացնելու համար: Երկարաժակետ ծրագրեր նախաձեռնելու, մասնագիտական և այլ կարիքներից բխող վերապատրաստումներ և դասընթացներ կազմակերպելու համար քոլեջին անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսական կազմի խրախուսման քաղաքականություն և կանոնակարգի առկայությունը, սակայն դասախոսների խրախուսման մեխանիզմները դեռևս թույլ են ձևավորված, չկան համակարգային մոտեցումներ, կարելի է եզրակացնել, որ դեռևս քաղաքականությունը լրամշակման և ներդրման կարիք ունի: Ըստ էության գործող փաստաթուղթը չի նախատեսում դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը և չի սահմանում հստակ խրախուսման ձևեր, թեև խնդիրը կրկին բախվում է ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելուն, այնուամենայնիվ, վերոնշյալ քաղաքականությունը կարևոր է նաև դասախոսական կազմի կայունության ապահովման տեսանկյունից, այն պետք է ապահովի դասախոսների ընթացիկ աշխատանքների բազմակողմանի գնահատումը և աշխատանքի գրավչության պահպանումը: Հարկ է ընդգծել, որ քոլեջի տնօրինությունը ջանքեր է գործադրում այս ուղությամբ: Առաջիկայում նախատեսում են մի շարք խրախուսման մեխանիզմներ տեղայնացնել քոլեջում, օրինակ՝ ներդնել մարզական արդյունքների համար պետականորեն նախատեսված պարգևավճարները մարզիչ-դասախոսների համար, բարձրացնել աշխատավարձի չափը: Այս ամենն իրականացնելու համար ԵՕՀՊՄՔ-ի ղեկավար կազմը պատրաստվում է դիմել պետական մարմիններին:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ներգրավվածությունը քոլեջի կրթական գործընթացներում, այնուամենայնիվ ԵՕՀՊՄՔ-ն մինչ օրս չի գնահատել վարչական աշխատակիցներից ուսանողների և դասախոսական կազմի գոհունակությունը, փորձագիտական խումբը կարծում է, որ առաջիկայում գնահատումներ իրականացնելու պարագայում ՄՈՒՀ-ը հնարավորություն կունենա բարելավելու ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների մասնագիտական առաջընթացին ուղղված միջոցառումները և գործիքակազմը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՕՀՊՄՔ-ն ապահովում է կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմի առկայությունը, սպորտային և կրթական գործընթացներում ներգրավված են աշխատանքային փորձ և բարձր որակավորումներ ունեցող մասնագետներ, ներդրված են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, ունի ռազամավարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՕՀՊՄՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտությունը ԵՕՀՊՄՔ-ի ՌԾ-ում որպես առաջնահերթություն չի սահմանվում: ԵՕՀՊՄՔ-ն մինչ օրս իրականացնելով բացառապես ուսումնական գործընթաց, ինչպես նաև սպորտային գործունեություն դեռևս չի սահմնել, թե ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ինչպիսի հետազոտական հավակնություններ ունի: ՄՈՒՀ-ը նաև չունի քաղաքականություն, որտեղ ներկայացվում է, թե որ գործընթացներն են ՄՈՒՀ-ի համար դիտարկվում հետազոտական, ինչ մեխանիզմներով են դրանք իրականացվելու և ովքեր են մասնակիցը լինելու: Քոլեջը փորձ չի արել ուսումնասիրելու, թե հետազոտական բաղադրիչի իրականացումը տեղական և միջազգային այլ սպորտային միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ինչպես է արտահայտվում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսները հիմնականում չեն իրականացնում հետազոտություններ, չեն գրում ձեռնարկներ, որը հաճախ պայմանավորված է դասախոսների և մարզիչների ուսումնական բեռնվածությամբ, ինչը թույլ չի տալիս ժամանակ հատկացնել նաև հետազոտական և մեթոդական աշխատանքների իրականացմանը: Հարկ է նաև նշել, որ անհատական հետաքրքրության շրջանակներում քոլեջում իրականացվում են որոշ ոչ ոլորտային հետազոտական, մեթոդական աշխատանքներ, մասնավորապես նշվեց դյուցազնագրքի տպագրությունը և ՄՈՒՀ-ի տարեգրքի վերահրատարկման ուսումնասիրությունները:

Դասախոսները մարզչական տեսանկյունից չեն ուսումնասիրում բարձրակարգ մարզիկների սպորտային պատրաստության տարբեր կողմերին առնչվող ժամանակակից գրականություն: Փորձի կուտակման տեսանկյունից հետազոտության առարկա չի դիտարկվում նաև դասախոս-մարզիչի աշխատանքային փորձը, թեև առկա են գրանցված մարզչական մեծ հաջողություններ: Միևնույն ժամանակ, քոլեջը հանդիսանում է մարզաբազա, որտեղ իրենց մարզումներն են անցկացնում բարձրակարգ մարզիկներ, Եվրոպայի և Աշխարհի

առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ, քոլեջն ունի կիրառական հետազոտական աշխատանք իրականացնելու մեծ ներուժ՝ հաշվի առնելով սպորտային մարզման մեթոդաբանության քոլեջի առաջավոր փորձը:

Քոլեջում իրականացվող կրթական գործընթացների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսանողներին տրվող առաջադրանքները, որոնք կարող են ուսանողների մոտ ձևավորել հետզատական, քննադատական և վերլուծական կարողություններ, սակավ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին նախկինում հանձնարարվել են ներկայացնել ռեֆերատներ, ներկայումս հանձնարարականների այս տեսակը կրթական ծրագրից հանվել է: Ուսումնասիրելով նախկինում գրված ռեֆերատները՝ կարող ենք փաստել, որ աշխատանքներում բացակայել է վերլուծական բաղադրիչը, աշխատանքները արտատպումներ են եղել տարբեր կայքէջերից, նշված չի եղել գրականության ցանկ, ինչպես նաև առկա չեն ուսանողների հիմնական եզրակացությունները:

Ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով թիմային մարզաձևերից օրինակ ֆուտբոլում, ուսանողները մարզիչների հետ դիտում են մրցաշարեր և վերլուծում խաղի հիմնական ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև խաղի մասնակիցների հիմնական թերացումները: Անհատական մարզաձևերում /ծանրամարտ, ըմբշամարտ/ վերլուծական և ստեղծագործական հանձնարարականները հիմնականում բացակայում են, միայն մրցումներից առաջ կարող են ուսումնասիրել իրենց մրցակիցներին:

ԵՕՊՄՔ-ում ուսանողները դիպլոմային աշխատանքներ չեն ներկայացնում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ փաստը պայմանավորված է նրանով, որ ոչ բոլոր դասախոսներն ունեն հետազոտական աշխատանք ղեկավարելու փորձառություն և կարողություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ մակարդակում ուսումնառության ընթացքում ուսանողներին չի հանձնարարվում բացի ուսումնական նյութից այլ աղբյուրների և ոլորտում առաջավոր փորձի ուսումնասիրություն:

Ուսումնական հաստատությունը իր ինքնավերլուծությամբ նույնպես փաստում է, որ հետազոտական բաղադրիչը քոլեջի գործունեության ընթացքում առանցքային նշանակություն չի ունեցել:

Դատողություններ: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջի նպատակները հետազոտության ոլորտում տեսանելի չեն, սահմանված չէ ՄՈՒՀ-ի քաղաքականությունը հետազոտության ոլորտում, որը կնպաստեր քոլեջի հետազոտական ոլորտի զարգացմանը և նորարարությունների ապահովմանը:

Դասախոսներն ունեն շատ քիչ հետազոտություններ, որոնք անհատական նախաձեռնություններ են և սպորտի ոլորտի հետ առնչություն չունեն: Դասախոսների բեռնվածությունը և միաժամանակ իրականացվող մարզչական գործունեությունը թույլ չեն տալիս իրականացնել հետազոտական գործունեություն: Քոլեջի դասախոսական կազմի մեծամասնությունը մարզիչներ են, ունեն տարիների աշխատանքային փորձ և իրենց մարզական բնագավառում ցուցաբերել են բարձր արդյունքներ, սակայն նրանց կողմից իրենց

աշխատանքի մեթոդաբանությունը, մարզական պատրաստության տաբեր կողմերին առնչվող փորձառությունը և գիտելիքները հիմք չեն հանդիսացել մեթոդական ձեռնարկների կամ ուղեցույցների մշակման համար: Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ ներդված չեն դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ, որոնք կարող են նպաստել դասախոսների հետազոտական կարողությունների զարգացմանը, դասախոսների և մարզիչների մասնագիտական փորձի կուտակմանը:

ԵՕՀՊՄՔ-ն ունի բավականին հարուստ բազա (տարբեր մարզաձևերից բարձրակարգ մարզիկներ և մարզիչներ) կիրառական հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, իսկ հետազոտությունների արդյունքները կարող են խթանել հենց ՄՈՒՀ-ի գործունեությունը որպես բարձրակարգ մարզիկների դարբնոց: Հետազոտությունների արդյունքները կարող են հիմք հանդիսանալ մեթոդական ուղեցույցների և ձեռնարկների ստեղծման համար, ինչը կարող է հետաքրքրել ինչպես սպորտի ոլորտի մասնագետներին, այնպես էլ ուսանողերին որպես մասնագիտական մեթոդական գրականություն՝ հաշվի առնելով ոլորտում հայալեզու գրականության սակավությունը:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն, որ ուսանողներին տրվող առաջադրանքներում հետազոտական բաղադրիչը թերի է արտահայտվում, որը կարող է վտանգել ՈԱՇ-ով սահմանված 5-րդ մակարդակի՝ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների լիարժեք ձևավորմանը: Վերոնշյալ կարողությունների ոչ լիարժեք ձևավորումը կարող է խոչընդոտել ապագա մարզչի մասնագիտական կայացումը:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն, որ հետազոտությունները չեն փոխկապակցվում կրթության հետ՝ ինչպես կուրսային և անհատական, այնպես էլ դիպլոմային աշխատանքների միջոցով: Փորձագիտական խումբը միևնույն ժամանակ կարծում է, որ հաստատությունն ունի բոլոր նախադրյալները ինստիտուցիոնալ մակարդակում ուսումնական գործընթացը հետազոտական գործունեության հետ փոխկապակցելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ԵՕՀՊՄՔ–ում սահմանված չեն հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնությունները, առկա չէ հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն, առկա չեն ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքը խրախուսող մեխանիզմներ, ուսանողներին տրվող հանձնարարականներում սակավ է վերլուծական, ստեղծագործական կարողություններ ձևավորող բաղադրիչները, հստակ չեն հետազոտության և ուսումնառության միջև կապերը, փորձագիտական խումբը համարում է, որ ԵՕՀՊՄՔ–ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ-ն իր 2021-2026թթ. ՌԾ-ում որպես քոլեջի զարգացման գերակա ուղղություն առանձնացրել է ուսումնառության, մարզումների համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումն ու համապատասխան նյութատեխնիկական բազայի արդիականացումը (Խնդիր 2.1, Խնդիր 3.3)։ Կրթական ծառայությունների և մարզումների իրականացման համար քոլեջն ունի 5.5 հա հողատարածք։ Կրթական գործընթացը ԵՕՀՊՄՔ–ն իրականացնում է գլխավոր ուսումնական մասնաշենքում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 3086 քառ. մ։

Քոլեջի միջին մասնագիտական ուսուցման համակարգում սովորում է 220 ուսանող, որոնց համար ուսումնական գործընթացը կազմակերպվում է 9 լսարաններում։ Քոլեջում առկա որոշ լսարանների տարածքը փոքր է, առկա գույքը կարիք ունի վերականգման կամ նորերով փոխարինման։ Քոլեջի տնօրինության հետ փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ կրթական միջավայրի բարելավման նպատակով նախատեսված է իրականացնել փուլային վերանորոգման աշխատանքներ։

ԵՕՀՊՄՔ-ում գործում է նորակառույց հանրակացարանային շենք, գրադարան, թանգարան, ճաշարան և հանդիսությունների դահլիճ։

Ռեսուրսային բազայի դիտարկման արդյունքում փորձագիտական խումբն արձանագրել է, որ քոլեջն ունի համապատասխան ենթակառուցվածքներ՝ 10–ից ավելի մարզադահլիճ, կից հանդերձարաններ, մարզչական սենյակներ և բուժկետեր։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի մարզադահլիճներում անցակցվում են որոշ մարզաձևերի (ծանրամարտ, ըմբշամարտ) ՀՀ պատանիների առաջնության մրցումները։ Քոլեջի տարածքում առկա են նաև թենիսի և ֆուտբոլի մարզադաշտեր, նորակառույց ամֆիթատրոն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պետական խոշոր ներդրումային ծրագրի միջոցներով առաջիկայում կմեկնարկեն մարզադահլիճների հիմնանորոգման աշխատանքներ, ինչի արդյունքում ԵՕՀՊՄՔ-ում կստեղծվեն միջազգային չափանիշներին համապատասխանեցված մարզական ենթակառուցվածքներ՝ համալրված ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով։

Քոլեջն ունի նիստերի և հանդիսությունների դահլիճ (մինչև 200 մասնակցի համար), կան նաև առանձնացված սենյակներ՝ աշխատանքային հանդիպումների և քննարկումների համար։ ԵՕՀՊՄՔ–ի մասնաշենքերը ունեն համացանցային հասանելիություն, նախատեսվում է նաև մեծացնել Wi-Fi ծածկույթի գոտին։

ԵՕՀՊՄՔ–ի գրադարանում առկա է շուրջ 7000 անուն դասագիրք և 4800 միավոր գեղարվեստական գրականություն։ 2021-2022 ուստարվա տվյալներով՝ քոլեջի սաներից 200–ը օգտվում են գրադարանից։ Գրադարանային ֆոնդի որոշ մասը նվիրատվություն է։ Քոլեջը բաժանորդագրված չէ որևէ մասնագիտական ամսագրի, անդամագրված չէ միջազգային գրադարանային ցանցերին։ Գրադարանը թվայնացված չէ։

Մասնագիտական գրականություն ձեռք բերելու համար դասախոսներն օգտագործում են իրենց անձնական կապերը։ Քոլեջում առկա չէ համապատասխան ծավալի մասնագիտական ժամանակակից գրականություն, որի մասին նշեցին նաև ներքին շահակիցները։

Քոլեջի սաների գիշերակացը ապահովվում է բոլորովին վերջերս պետական միջոցներով կառուցված 5 հարկանի հանրակացարանում՝ 130 սենյակներով, որտեղ ներկա պահին բնակվում է շուրջ 170 ուսանող՝ հանարակրթական և միջին մասնագիտական ծրագրերից։ Հանրակացարանի սենյակները նախատեսված են 2 և 4 ուսանողների համար, սենյակները կահավորված են նոր գույքով, ապահովված են սանհանգույցներով։ Հանրակացարանում առկա է նաև լվացքատուն և չորանոց։ Հանրակացարանի առաջին հարկում գործում է համակարգչային առանձին սենյակ, քննարկումների և մարզական առաջնությունների դիտումների համար նախատեսված է «փափուկ անկյուն»։ Հանրակացարանում գործում է նաև շուրջօրյա բժշկական հերթապահություն, հատկացված են նաև մերսման սենյակներ, բուժկետ և 1 մեկուսարան՝ մահճակալով և անհրաժեշտ պարագաներով (մեկուսարանը նախատեսված է ուսանողներին անհրաժեշտության դեպքում անհատական բուժօգնություն ցուցաբերելու համար)։

Քոլեջը իր սաների համար հատկացրել է ճաշարանի տարածք, որը բխում է ուսանողների պահանջներից։ Ուսանողների սննդի օրաբաժինը մշակվում է բժիշկ–սննդաբանի կողմից։

ԵՕՀՊՄՔ-ն իր առջև խնդիր է դրել համապատասխանեցնել ֆինանսական կառավարումը ռազմավարական նպատակների իրագործմանը։ Քոլեջի բյուջեում տարանջատված չեն ֆինանսական միջոցների հատկացումները՝ ըստ ՌԾ–ի նպատակների, ֆինանսական պլանավորումներն արվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական ներկայիս կարողությունները։ Քոլեջի ֆինանսական միջոցների գերակշիռ մասը պետական բյուջեից մուտքերն են։ ԵՕՀՊՄՔ–ում ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկումն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը։ ՄՈՒՀ-ի ֆինանսական հիմնական ռեսուրսները ուղղվում են աշխատավարձին, ուսանողների սննդի կազմակերպմանը և կոմունալ վճարումներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ COVID 19 համավարակի ընթացքում քոլեջն ունեցել է տնտեսումներ և դրանք նպատակուղղել հանրակացարանային շենքի ամբողջական կահավորմանը և այլ ծախսերի։ Քոլեջում ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է տարեկան կտրվածքով։ Համապատասխան միջոցներով և սարքավորումներով ապահովման կամ թարմացման անհրաժեշտությունը հիմնականում որոշվում է ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջագրերով։

Ռեսուրսային բազայի պահպանման և թարմացման նպատակով տարեկան բյուջեով նախատեսվում են ընթացիկ նորոգման ծախսեր (5,5 մլն դրամ)։

ԵՕՀՊՄՔ–ի Կանոնադրությունում նշված է, որ քոլեջը կարող է ունենալ ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ Քոլեջը ներկա պահին չունի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ։ Ինչպես պարզվեց շահակիցների հետ հանդիպումներից, ՊՈԱԿ-ի կարգավիճակում քոլեջի մարզադահլիճների վարձակալությունը ծախսարդյունավետ չի գնահատվում։

ԵՕՀՊՄՔ–ն իր 2021-2026 թ.թ. ՌԾ-ում (3-րդ նպատակ) կարևորում է մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին համապատասխան լսարանային պայմանների առկայությունը։

Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է պլանավորված և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված և լիցենզավորման տեղերի թվին համապատասխան, ուստի կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում, սակայն նույնը չի կարելի ասել հանրակրթական դպրոցի մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հասարակության կողմից պահանջարկ կա նաև 6-րդ դասարան բացելու, սակայն լսարանային սուղ պայմանները թույլ չեն տալիս ղեկավարությանը նման որոշում կայացնելու:
Քոլեջը նախատեսում է լսարանների վերանորոգում և անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում: Այս պահին դասախոսներն ու ուսանողները կարիք ունեն էլեկտրոնային գրատախտակների, նոր համակարգիչների և պրոյեկտորների: Ներկայումս քոլեջում առկա է միայն 1 պրոյեկտոր և 8 համակարգիչ: Շահակիցները նշեցին նաև աթլետիկայի գույքի խնդիրը. ՄՈՒՀ-ում աթլետիկայի բազմաթիվ ձևերից հնարավոր է կազմակերպել մարզումներ միայն 2-ի համար:

ԵՕՀՊՄՔ-ի ղեկավար կազմը կարևորում է ոչ հենակետային մարզաձևերի համար մարզաբազայի ստեղծումը և նախատեսում են 1,7 հա ազատ տարածքում կառուցել ոչ հենակետային մարզաձևերի մարզական համալիրը, որը կարող է սպասարկել շուրջ 7 մարզաձև՝ վոլեյբոլ, մարմնամարզություն, սպորտային պարեր, հենդբոլ, ֆուտբոլ և այլն:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության կազմակերպումը, փաստաթղթերի կառավարումը, ներքին և արտաքին փաստաթղթերի շարժը, իրականացվում է «Գործավարության կանոնակարգին» համապատասխան:

Քոլեջում ներդրված է արտաքին փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը: Ներքին փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է թղթային տարբերակով, տեղեկատվության փոխանակումը ապահովվում է էլեկտրոնային փոստով, առկա է ներքին ցանց: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ օրինակ մեթոդական խորհրդի, կառավարման խորհրդի, նիստերի արձանագրությունները վարվում են ձեռագիր, պահպանված չէ արձանագրության կազմման ձևաչափը:

Քոլեջում առկա է արխիվ, որը պատասխանատու է փաստաթղթերի առանձին տեսակների արխիվացման համար:

ԵՕՀՊՄՔ–ի մուտքը հսկվում է հերթապահ-պահակների կողմից: Քոլեջում հերթապահում են անվտանգության աշխատակիցներ, ովքեր ապահովում են ուսանողների և դասախոսների անվտանգ միջավայրը:

ԵՕՀՊՄՔ–ի շենքերի միջանցքներում սահմանված է հերթապահություն: Առանց կուրսղեկի (կարգավարի) և ծնողի իմացության ուսանողը չիկարող դուրս գալ ՄՈՒՀ-ի տարածքից:

Քոլեջի ամբողջ տարածքը և մասնաշենքերը ապահովված են տեսանկարահանող սարքավորումներով, միջանցքներում առկա են տարհանման սխեմաներ, հակահրդեհային անվտանգության պահպանման նպատակով ձեռք են բերվել նոր կրակմարիչներ, հրշեջ փողրակներ:

ՄՈՒՀ-ի շենքերի մուտքերիի մոտ առկա են թեքահարթակներ: Հանրակացարանի մուտքը ևս հարմարեցված է հատուկ կարիք ունեցող շահակիցների համար:

Հանրակացարանում կան նաև առանձնացված ներառական լսարաններ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց հյուրընկալելու համար։

ԵՕՀՊՄՔ–ում գործում է բուժվերականգնողական ստորաբաժանում, որն ապահովված է անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով։ Տարեկան 2 անգամ քոլեջի մարզիկ-սաներն անցնում են դիսպանսերիզացիա։ Պարբերական բուժզննումների ժամանակ եղել են դեպքեր, երբ ուսանողների մոտ հայտնաբերված առողջական խնդիրների (թոքի վնասվածք, ձեռքերի էկզեմա) պատճառով ցուցվել է փոխել մարզաձևը։

Հանրակացարանում իրականացվում է շուրջօրյա բժշկական հերթապահություն (բժիշկի, բուժքույրի, դայակի ու հերթապահ մանկավարժի հսկողությամբ)։ Բժիշկներն սպասարկում են ներքոլեջային մրցումները, ամենօրյա մարզական պարապմունքները։ Քոլեջը ունի 12 բուժքույր, 1 ատամնաբույժ և 1 մերսող։ Քոլեջում իրականացվում է ուսանողների առողջական վիճակի ընթացիկ վերահսկողություն կապված սպորտային մարզումների հետ։

ԵՕՀՊՄՔ–ում շահակիցներին տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատումն իրակնացվել է հարցման և ներքին շահակիցների հետ հանդիպում-քննարկումների միջոցով։

Պարզ դարձավ, որ այլ ներքին շահակիցների (դասախոսական և վարչական կազմ) խմբերի շրջանում տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ հարցումներ չեն իրականացվել։ Ներքին շահակիցները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրաձայնել և ստանալ պատասխաններ ղեկավար կազմի հետ հանդիպումների ժամանակ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵՕՀՊՄՔ-ն իր 2016-2021թթ. ՌԾ-ում որպես քոլեջի զարգացման գերակա ուղղություն առանձնացրել է ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումը։ Ընդհանուր առմամբ քոլեջի ռեսուրսային բազան թույլ է տալիս ապահովելու անհրաժեշտ միջավայր ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար։ Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերն ուղղված նոր ենթակառուցվածքների վերանորոգմանը և վերազինմանը։ Նախատեսված է մարզադահլիճների ու ուսումնական մասնաշենքի հիմնանորոգում, ինչը կհանգեցնի մարզման և կրթական գործունեության արդյունավետության բարձրացմանը։

Չնայած առկա կրթական ռեսուրսներին, այնուամենայնիվ, տեխնիկական միջոցներով հագեցման անհրաժեշտություն կա՝ մասնավորապես պրոյեկտորների, համակարգիչների և SMART գրատախտակների, նշված ռեսուրսների սակավությունը երբեմն խոչընդոտում է դասախոսների՝ ինտերակտիվ և ժամանակակից մեթոդների լայն կիրառումը։

Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ը չի սահմանափակվում միայն պետական ֆինանսավորմամբ և կրթական միջավայրի բարելավման նպատակով կարողանում է ձեռք բերել նաև հավելյալ ֆինանսական միջոցներ հովանավորչության միջոցով։ Այս մեխանիզմի շնորհիվ վերանորոգվել և բարեկարգվել են մի շարք լսարաններ։ ՄՈՒՀ-ը շարունակում է ջանքեր գործադրել գտնելու տարբեր ֆինանսավորման աղբյուրներ շենքի ամրացման, լսարանային պայմանների բարելավման և արդիականացման նպատակով։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԵՕՀՊՄՔ-ն իր տնտեսած միջոցները նպատակային է տնօրինում՝ COVID 19 համավարակի ժամանակ տնտեսված բյուջեն հատկացնելով վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացմանը:

Չնայած որ եկամուտների դիվերսիֆիկացման հնարավորությունները սահմանափակ են, սակայն հատկանշական է, որ քոլեջը ներկայումս ձգտում է նոր ֆինանսական ռեսուրսների ձևավորման աղբյուրներ ներգրավել, ինչը կարող է նպաստել ֆինանսական կայունությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն, որ ԵՕՀՊՄՔ–ն պլանավորում է որոշակի ծախսեր, որոնք ուղղված են քոլեջի նպատակների իրականացմանը, սակայն ծախսերը մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրի ռեսուրսային պահանջների, որն առավել հասցեական կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները:

Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մասնագիտական նորագույն գրականությամբ գրադարանի համալրմանը և էլեկտրոնային գրադարանի ներդրմանը, որը թույլ կտա ուսանողներին և դասախոսներին հասանելիություն ունենալ ժամանակակից գրականությանը:

Թեև ԵՕՀՊՄՔ-ում ներդրված է արտաքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային գործիքներ, ներքին փաստաթղթաշրջանառությունը հիմնականում տեղի է ունենում թղթային ավանդական տարբերակով, ինչը կարող է խոչընդոտներ առաջացնել հասանելիության տեսակետից:

Փորձագիտական խումբը, դրական է գնահատում, որ ՄՈԻՀ–ում առկա են ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության ծառայություններ, ինչի շնորհիվ ուսանողները հնարավորություն ունեն մարզվել անվտանգ միջավայրում, իսկ անհրաժեշտության պարագայում ստանալ բժշկական աջակցություն: Շենքային պայմանները հիմնականում հարմարեցված են հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, իսկ նոր կառուցված հանրակացարանն իր ժամանակակից կառցվածքով ամբողջովին թույլ է տալիս ընդունելու հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրված են ռեսուրսներից բավարավածության որոշակի մեխանիզմներ, սակայն դրանք ևս բարելավման կարիք ունեն՝ հնարավորություն տալով ներգրավելու շահակիցների առավել լայն շրջանակ, որը թույլ կտա լիարժեք բացահայտել նյութատեխնիկական հագեցվածության կամ այլ ռեսուրսների ձեռքբերման վերաբերյալ կարիքները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ սահմանափակ ֆինանսական միջոցների պայմաններում քոլեջը ստեղծել է բավարար պայմաններ մասնագիտական կրթություն իրականացնելու համար, ռեսուրսային բազան հիմնականում բավարարում է ՄԿԾ-ների իրականացմանը, ԵՕՀՊՄՔ–ն ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և նորերի ձեռքբերման ուղղությամբ, առկա են ֆինանսական ռեսուրսների բաշխման և վերահսկման որոշակի մեխանիզմներ, ներդված է տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգ, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնամարզական գործընթացի կազմակերպման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՕՀՊՄՔ–ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ–ը ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ–ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ինչպես նաև քոլեջի կանոնադրությամբ: ԵՕՀՊՄ-ն տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների:

ՄՈՒՀ-ում ձևավորվել է արտաքին և ներքին հաշվետվողականության որոշակի համակարգ: Քոլեջի ներքին հաշվետվողականության արդյունքը տնօրենի տարեկան հաշվետվությունն է, որը ներառում է տեղեկատվություն ԵՕՀՊՄՔ–ի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ: Տնօրենի տարեկան հաշվետվությունը ներկայացվում է կառավարման խորհրդին:

Հաշվետվողականությունը գործում է ներքևից վերև և վերևից ներքև սկզբունքով: Հաշվետվություններ ներկայացնում են բոլոր ստորաբաժանումները, որի հիման վրա ձևավորվում է տնօրենի տարեկան հաշվետվությունը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը չունի հաշվետվողականության սահմանված կանոնակարգ: Փաստաթղթային ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ ԵՕՀՊՄՔ-ում հաշվետվողականության ներկայացման հստակ և միասնական ձևաչափ առկա չէ բոլոր ստորաբաժանումների համար: ԵՕՀՊՄՔ–ի պլանավորումները և հաշվետվությունները չեն բխում քոլեջի ՌԾ-ի առաջնահերթություններից, հիմնված չեն սահմանված ցուցիչների վրա: Պլանավորումները հիմնված են աշխատակցի փորձի և ամենամյա իրականացվող աշխատանքների վրա: Հաշվետվողականության գործող համակարգի և կիրառվող մեխանիզմներ արդյունավետության վերլուծություններ քոլեջում չեն իրականացվում:

ԵՕՀՊՄՔ–ի գործունեության հաշվետվողականության միջոց է դիտարկվում նաև քոլեջի 30-ամյա գործունեության մասին տարեգիրքը, որտեղ ներկայացվում են անցած երեսունամյա (1971-2001 թթ.) ուղու հիմնական փուլերը, ներառված են Օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում աչքի ընկած մարզիկների անուններն ու նրանց նվաճումները: Ներկայումս հրապարակման է պատրաստվում քոլեջի 50-ամյա գործունեությունը լուսաբանող տարեգիրքը:

Քոլեջի ընթացակարգերի, կրթական գործընթացների, տեղեկատվական համակարգի թափանցիկության ու հասանելիության վերաբերյալ քոլեջի հավակնությունները արտահայտվել են 2016-2021 թթ - ՌԾ-ի 4-րդ նպատակում (Խնդիր 4.1):
Դրան հասնելու համար քոլեջը սահմանել է հետևյալ գործողությունները -

- Ապահովել Քոլեջի կայքէջի պարբերական զարգացումը՝ հարստացնելով բովանդակային և ծրագրային բաղադրիչները (այդ թվում նաև անգլերեն և ռուսերեն տարբերակներով),
- Բազմազանեցնել համագործակցությունը ԶԼՄ–ների հետ,
- Ապահովել ազգային և միջազգային մակարդակներում քոլեջի մասին տեղեկատվության տարածումը,
- Պարբերաբար անցկացնել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ քոլեջի գործունեությունը բարելավելու նպատակով:

ԵՕՀՊՄՔ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության ապահովման նպատակով 2021թ -–ին քոլեջում ներդրվել է Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի պատասխանատուի հաստիքը՝ նպատակ ունենալով զարգացնելու քոլեջի համագործակցային կապերը տեղական և միջազգային մակարդակում, նպաստելու ուսումնական հաստատության հանրային կարծիքի և վարկանիշի բարելավմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի պատասխանատուն աշխատանքները իրականացնում է հասարակական հիմունքներով: Հանրային կապերի ձևավորմանը միտված գործընթացները պլանավորված են քոլեջի ՌԾ–ով, որի իրականացման համար օգտագործվում են տարբեր միջոցներ՝ ԶԼՄ լուսաբանումները, սոցիալական ցանցերը, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի այցելությունները դպրոցներ, առաջիկայում նախատեսվում է մասնակցություն ունենալ նաև կրթական ցուցահանդեսների:

Առկա են նաև տեղեկատվական հասանելիության նպատակին ծառայող ոչ ֆորմալ մեխանիզմներ - քոլեջի տեսանելի վայրերում փակցված են տնօրինության կողմից տրվող հրամանները, դասացուցակը, ինչպես նաև՝ անցկացվող միջոցառումների վերաբերյալ հայտարարությունները:

ԵՕՀՊՄՔ-ն կարևորում է հասարակության հետ կապերի զարգացումը, որն ամրագրված է քոլեջի ռազմավարական ծրագրում, Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի բաժնի կանոնակարգում:

2021թ. ստեղծվել է քոլեջի պաշտոնական կայքը (www.olympcollege.am), որն այժմ խափանված է: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, առաջիկայում նախատեսված է վերագործարկել քոլեջի պաշտոնական կայքը և այն հագեցնել օտարալեզու տեղեկատվությամբ:

Քոլեջն առավել ճկուն հետադարձ կապի միջոց է համարում Facebook սոցիալական ցանցի պաշտոնական էջը, որտեղ նշված են քոլեջի հետ կապ հաստատելու հիմնական ձևերը՝ քոլեջի էլեկտրոնային հասցեն, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Սոցիալական էջում ակտիվորեն լուսաբանվում են նաև քոլեջի սաների հետ մարզաշխարհի հայտնի մասնագետների հետ հանդիպումները, ուշադրության կենտրոնում

են հանրապետական և միջազգային առաջնություններում քոլեջի սաների գրանցած հաջողություններն ու ձեռքբերումները: Ֆեյսբուքյան էջում զետեղված է նաև բավարար տեղեկատվություն գործող կրթական ծրագրի, մարզաձևերի, ընդունելության տեղերի վերաբերյալ:

Առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների, բաց դասերի, հայտնի մարզիկների հետ հանդիպումների մասին քոլեջում պատրաստվում են իրազեկող հոդվածներ և ֆոտոռեպորտաժներ, որոնք տարածվում են սոցիալական հարթակում, ինչպես նաև ԶԼՄ-ներում: Քոլեջի գործունությունը հանրայնացվում է նաև տեսաֆիլների միջոցով:

ԵՕՀՊՄՔ-ն իր ռազմավարական խնդիրներից է համարում հասարակության շրջանում գիտելիքների և արժեքների տարածումը (Նպատակ 2, խնդիր 2.2): ՄՈՒՀ-ում առկա են հասարակության գիտելիքների և արժեքների տարածման ոչ ֆորմալ մեխանիզմներ (հանդիպումներ, տարաբնույթ միջոցառումներ, լրացուցիչ դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ):

Հասարակությանը սպորտային և ռազմահայրենասիրական արժեքներ փոխանցելու նպատակին են ծառայում նաև մի շարք այլ նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ լսարանների անվանակոչումը օլիմպիական խաղերի հայազգի չեմպիոնների անուններով, արցախյան հերոսամարտերում զոհված զինվորների հիշատակին նվիրված միջոցառումների կազմակերպումը: Այս տեսանկյունից քոլեջում կարևորվում է 44-օրյա պատերազմում զոհված սաների հիշատակին նվիրված հուշարձան կոթողի և «Փառքի սրահի» բացումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում ուսանողների նախաձեռնությամբ անցկացվել են բաց դասեր, սեմինար քննարկումներ: Հասարակությանը արժեքներ փոխանցելու միտումով կազմակերպվում են սոցիալական և մշակութային միջոցառումներ:

Քոլեջի դասախոսները կամավորական հիմունքներով ներգրավված են մրցավարական աշխատանքներում:

Պետք է նշել նաև, որ հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման հանրային պահանջարկի ուսումնասիրություն, գործադրված մեխանիզմների արդյունավետության համակողմանի գնահատում չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԵՕՀՊՄՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված արտաքին և ներքին հաշվետվողականության համակարգ: Քոլեջում կանոնավոր կերպով, ըստ աստիճանակարգության, ներկայացնում են հաշվետվություններ: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ հաշվետվություններն անհրաժեշտ է դարձնել առավել վերլուծական, դրանցում ներառել արդեն իսկ սահմանված ցուցիչները, որը թույլ կտա գնահատել առկա վիճակը և բարելավել հետագա գործընթացները: Բոլոր ստորաբաժանումների աշխատանքների պլանավորումն ու հաշվետվությունների կազմումը՝ ըստ ՌԾ նպատակների, հնարավորություն կտա բոլոր շահակիցներին շարունակաբար գնահատել քոլեջի ՌԾ-ով սահմանված խնդիրների իրականացումը, ձեռքբերումները և անհաջողությունները:

Քոլեջում տեղեկատվության փոխանցման հիմնական մեխանիզմը քոլեջի և տարբեր ստորաբաժանումների ֆեյսբուքյան էջերն են, մինչդեռ պաշտոնական կայէջի ակտիվացումը և հասարակությանը հնարավորինս շատ տեղեկատվություն փոխանցելը քոլեջի և

իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ հնարավորություն կտա քոլեջին բարձրացնել իր վարկանիշը, արդյունքում ձեռք բերել ավելի շատ վստահություն գործատուների, դիմորդների և այլ շահակիցների շրջանում: Քոլեջի կայքում օտար լեզուներով տեղեկատվության ամբողջական ներկայացումը կարող է նպաստել միջազգային գործընկերների հետ կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը հնարավորինս ակտիվություն է փորձում ցուցաբերել առցանց հարթակներում, այնուամենայնիվ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների առավել համակարգված կիրառումը և ակտիվացումը հնարավորություն կտա շահակիցների առավել լայն շրջանակ ներգրավել քոլեջի գործընթացներում՝ ապահովելով ընթացող բոլոր գործընթացների մասին իրազեկվածության բարձրացումը:

Դրական է նաև տարիներ շարունակ քոլեջի կողմից հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումների իրականացումն ու հանրայնացումը, այնուամենայնիվ դեռևս իրականացվող գործընթացների վերաբերյալ գնահատում տեղի չի ունեցել, որը թույլ կտա գնահատել աշխատանքների արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, քոլեջը քայլեր է ձեռնարկում իր գործընթացների թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար ապահովելու ուղղությամբ, գործում են շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքներ փոխանցելու որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՕՀՊՄՔ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ-ի 2021-2026 թթ.-ի ռազմավարական ծրագրով պլանավորված 4 նպատակներից մեկը համագործակցությունն է, որը ենթադրում է քոլեջի համագործակցության շարունակական զարգացում ազգային և միջազգային մակարդակներում: ԵՕՀՊՄՔ-ի կողմից որպես ռազմավարական խնդիր է սահմանվել ապահովելու ոլորտի պետական, մասնավոր, ՀԿ և միջազգային ոլորտի շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ փոխհամագործակցության մեխանիզմներ: Գործընթացների արդյունավետության բարձրացման և կանոնակարգվածության նպատակով 2021թ.-ի հունվարին ձևավորվել է

արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժին, որի նպատակն է ապահովել հաղորդակցությունը և կապը օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ՝ Քոլեջի կապերը տարբեր կառույցների և հաստատությունների հետ զարգացնելու, տեսանելիությունը բարձրացնելու, սովորողների շարժունությանը նպաստելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իր արտաքին գործընկերային հարաբերությունների ակտիվացման ու հաստատման հիմքում տեսնում է ինչպես տեղական և միջազգային մրցույթներին մասնակցությամբ, այնպես էլ իրենց մոտ նման մրցույթների կազմակերպման մեջ:

Ինչպես արդեն նշվեց, ՄՈՒՀ-ում 2021թ.-ին ձևավորվել է արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժինը, առկա է բաժնի կանոնակարգ, սակայն բացակայում է բաժնի աշխատանքային պլանը:

Քոլեջի արտաքին գործընկերային կապերի հաստատմամբ զբաղվում են նաև տնօրենը, պրակտիկայի վարիչը, կառավարման խորհրդի անդամները և այլն, որոնք արտաքին կապեր փորձում են ձևավորել՝ օգտագործելով անձնական գործընկերային շրջանակը:

Քոլեջի համագործակցային հարաբերությունները բավականին ընդգրկուն են. ԵՕՀՊՄՔ-ն տարբեր ֆորմատներով և նպատակներով ակտիվորեն համագործակցում է ՀՀ, ԱՀ մարզական կառույցների, դպրոցների, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, Որակի ապահովման ազգային կենտրոնի, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի հետ: Գործընկերների ընդգրկուն ցանկը նաև ծառայում է ուսանողների պրակտիկաները կազմակերպելուն: Քոլեջն ունի արդեն ձևավորված պայմանագրային հարաբերություններ մի շարք պետական և մասնավոր գործընկեր կառույցների հետ, ինչպիսիք են՝ Վ.Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Հ. Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Հայաստան մարզական ակումբի, Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի հետ, որտեղ կազմակերպվում է ուսումնառողների պրակտիկան: Պետք է նաև նշել, որ ոչ հենակետային մարզաձևերով (մարմնամարզություն, լող, աթլետիկա և այլն) ուսանողների գործնական պարապմունքները կազմակերպվում են գործընկեր մարզադպրոցներում, քանի որ քոլեջը չունի այդ մարզաձևերին համապատասխան ռեսուրսային բազա, օրինակ՝ լողավազաններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում կա ցանկություն համագործակցել մարզային մարզադպրոցների հետ, որի արդյունքում կհամալրվեն նաև քոլեջի ուսանողների թիվը:

Համաձայն ինքնավերլուծության՝ կազմակերպվող տարբեր մրցաշարերի արդյունքում մարզիկներն ու մարզիչները հնարավորություն են ունեցել լինելու ավելի քան 84 երկրներում: Միայն ներքոլեջային մրցումների քանակը կարող է հասնել 46-ի, որին մասնակցում են ՀՀ տարբեր տարածաշրջաններից, Ջավախքից, Արցախից, Բաթումիից, Թբիլիսիից, Իրանի Իսլամական Հանրապետությունից հրավիրված պատանի մարզիկներ, ինչպես նաև միջինասիական հանրապետություններից ու ՌԴ-ից եկած տարբեր տարիքային խմբերի պատանի մարզիկներ՝ իրենց մարզիչներով: 2021թ. ամռանը, Քոլեջի ուսանողները մասնակցել

են Մոսկվայում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսին, որից հետո կիսվել են իրենց փորձով: Այցի շրջանակներում ծանոթացել են տարբեր ազգերի՝ Բելոռուսիայի, Ղազախստանի, Ուզբեկստանի և այլ երկրների ներկայացուցիչների հետ: Սեմինարը վերաբերում էր սպորտին, սննդակարգին, դոպինգին, օլիմպիզմին: Այցից հետո քոլեջում կազմակերպված քննարկում-հանդիպման ժամանակ իրենց ստացած գիտելիքներով կիսվել քոլեջի մարզիկ-սովորողների հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական և միջազգային գործընկերներ գտնելը և նրանց հետ պայմանագրեր կնքելու գործընթացը համակարգված չէ:

ԵՕՀՊՄՔ-ն կարևորում է ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի (անգլերենի) իմացությունը և դրա բարելավման նպատակով պարբերաբար անկաղրաղառնում է նրանց անգլերեն լեզվի իմացության հարցերին՝ կազմակերպելով անվճար դասընթացներ թիրախային տարբեր խմբերի համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կազմակերպված դասընթացների արդյունքները գնահատված չեն: Անգլերեն լեզվի իմացությունը կարևորվում է ոչ միայն արտաքին գործընկերային հարաբերությունների հաստատման տեսանկյունից, այլ նաև մարզիկների և մարզիչների միջազգային մրցաշարերին մասնակցության ժամանակ հաղորդակցման տեսանկյունից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռուսերենի տիրապետման մակարդակն առավել բարձր է, քան՝ անգլերենը: Համաձայան ինքնավերլուծության՝ բոլոր դասախոսները տիրապետում են ռուսերենի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի զարգացման ռազմավարական նպատակ է սահմանվել համագործակցության ապահովումը: Դրական է նաև, որ ԵՕՀՊՄՔ-ն քայլեր է իրականացրել արտաքին կապերի հաստատման գործընթացների կանոնակարգման ուղղությամբ, այդ նպատակով ներդրվել է նաև հասարակայնության հետ կապերի բաժինը: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ բաժինը չունի աշխատանքային պլան, ինչը կարող է խոչընդոտել արտաքին կապերի զարգացմանը և ռազմավարությամբ սահմանված նպատակների իրագործմանը:

Քոլեջն ունի համագործակցային հարաբերությունների ընդգրկուն ցանկ, որոնք բավարար են որակյալ կրթություն ապահովելու ու կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքներն իրացնելու համար, մասնավորապես՝ փորձագետներն արձանագրում են, որ կազմակերպությունների քանակն ընդգրկուն է ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպման համար: Միաժամանակ դրանք թույլ են տալիս բարձրացնել քոլեջի հեղինակությունն ու ճանաչելիությունը, մասնավորապես՝ մրցաշարերի կազմակերպումն ու դրանց մասնակցությունը: Նաև փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ նման միջացառումներն ու նախաձեռնողականությունը նպաստում են փորձի փոխանակմանն ու հետագա գործընկերային հարաբերությունների հաստատմանը: Գործատուների հետ համագործակցությունը նպաստում է գործնական դասերի կազմակերպմանը և միասնական ռեսուրսի օգտագործմանը, նամանավանդ ոչ հենակետային մարզաձևերում:

Փորձագիտական խումբը նաև դրական է համարում օտար լեզուների

կատարելագործմանն ուղղված քոլեջի քայլերը, այդուհանդերձ դրանք դեռևս կանոնակարգված չեն: Օտար լեզուների իմացությունը (անգլերեն) թույլ կտա մեծացնելու միջազգային գործընկերների շրջանակը և շարժունությանը: Ռուսերեն լեզվի իմացությունը համեմատաբար առավել բարձր մակարդակի վրա է գտնվում, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին գտնել առավել շատ գործընկերներ ԱՊՀ տարածքում: ՄՈՒՀ-ն իր լիարժեք միջազգայնացումըտեսնում է ռեսուրսային բազային ամբողջական վերազինումից հետո: Միջազգայնացման հիմնական հնարավորությունները դիտարկվում են միայն մարզական ոլորտում:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քոլեջն ունի արտաքին գործընկերային հարաբերությունների հաստատման հստակ սահմանված նպատակ, կարևորում է միջազգային և արտաքին գործընկերային համատեղ ծրագրերը, մասնավորապես՝ մրցաշարերի կազմակերպումը, ունի բավարար գործընկերներ կրթական ծրագրերով վերջնարդյունքներն ապահովելու համար, քայլեր է իրականացնում դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու համար, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալկարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ԵՕՀՊՄՔ-ում որակի ապահովման (ՈԱ) գործընթացների կանոնակարգման նպատակով մշակվել են որոշ հայեցակարգային փաստաթղթեր՝ քաղաքականություն, ընթացակարգեր: Վերջիններս, ըստ Ինքնավերլուծության, ուղղված են ՄՈՒՀ–ի առաքելության և ՌԾ–ով սահմանված խնդիրների և նպատակների իրագործմանը:

2021թ.–ին ներդրվել է Որակի ապահովման քաղաքականությունը, որտեղ նշվում են որակի ապահովման խնդիրները, սկզբունքները, նկարագրված են որակի ապահովման համակարգն ու մշտադիտարկման գործիքները:

Ինչպես նշվում է Ինքնավերլուծությունում, ՈԱ քաղաքականության նպատակն է ստեղծել քոլեջի ՈԱ համակարգի հայեցակարգային-մեթոդաբանական այն հիմքերը, որոնք կնպաստեն որակի մշակույթի ձևավորմանը, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրմանը, մասնագիտական կրթության որակի բարձրացմանը: Նաև ՄՈՒՀ–ի 2021-2026թթ.-ի ՌԾ–ի զարգացման ռազմավարական խնդիրներից է որակի կառավարման

համակարգի արդյունավետության բարձրացումը, մասնավորապես կարևորվում է ՊԻԳԲ շրջափուլային համակարգի ներդնումը, ՄՈՒՀ–ի կրթական գործունեության մշտադիտարկման և որակի ապահովման համակարգերի կատարելագործումը (Խնդիր 3.4):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հստակեցված չեն ՈԱ քաղաքականությամբ սահմանված նպատակների և քայլերի կատարման ժամկետները, իսկ կարճաժամկետ կտրվածքով վերլուծված չեն արձանագրված արդյունքները: Քոլեջի ՌԾ–ով ամրագրված ՈԱ հիմնական գործողությունները դեռևս պլանավորման փուլում են: Միաժամանակ պարզվեց, որ ՈԱ համակարգի համեմատական վերլուծություն չի արվել, ինչը սահմանված է ՈԱ քաղաքականությամբ և կանոնակարգում:

2020-2021 ուսումնական տարում մշակվել են «Քոլեջում հարցման կանոնակարգը», «Որակի ապահովման բաժնի կանոնակարգը», վերջինս առաձնացնում է ԵՕՀՊՄՔ–ի բոլոր ստորաբաժանումներում որակի ներքին ապահովման գործընթացների աջակցման, արդյունքների վերլուծման գործառույթը:

Ըստ ինքնավերլուծության՝ ԵՕՀՊՄՔ-ի 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի ընդունումից հետո անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու որակի ապահովման ինքնուրույն կառույց ավելի լայն և մասնագիտացված գործառույթներ իրականացնելու համար:

2021թ. ՄՈՒՀ–ում ներդրվել է Որակի ապահովման պատասխանատուի հաստիքը: 2017թ.–ից գործում է Որակի ապահովման հանձնաժողովը, հանձնաժողովում ներգրավված են վարչական, դասախոսական կազմից ներկայացուցիչներ: Որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են աշխատանքային տարեկան պլանով, որտեղ ներկայացված են աշխատանքի բովանդակությունը, ժամկետն ու պատասխանատուները: Աշխատանքային պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նախատեսված են մի շարք գործողություններ, որոնք չեն առնչվում հանձնաժողովի աշխատանքներին, օրինակ՝ մարզումների գործընթացի և առողջ ապրելակերպի իրականացում և օրվա ռեժիմի պահպանում, որը ՈԱ գործառույթ չէ:

Որակի ապահովման հանձնախմբի կողմից իրականացված գործընթացների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունները բացակայում են, հանձնախմբի գործունեության արդյունավետության գնահատում չի իրականացվում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՈԱ հանձնախմբի անդամները վերապատրաստումների կարիք ունեն: ԵՕՀՊՄՔ-ում որակի ապահովման գործընթացների համար հատկացված ֆինանսական միջոցներ առկա չեն: Որակի ապահովման բաժնի համար դեռևս հատկացված չէ առանձին աշխատանքային տարածք:

Քոլեջում ներքին շահակիցներ դիտարկվում են դասախոսական կազմը և ուսանողները: Թեև որակի ապահովման քաղաքականությունում ամրագրված է, որ քոլեջը կարևորում է ներքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման և բարելավման գործընթացներում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում արտահայտվել է միայն քոլեջի ինքնավերլուծության իրականացման աշխատանքներում:

Որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավման մեխանիզմ է

դիտարկվում ուսանողական հարցումները: ԵՕՀՊՄՔ-ի ուսանողները մասնակցում են դասընթացների և դասախոսների գնահատման հարցումներին, ռեսուրսների և տրամադրվող ծառայությունների գնահատմանը, հարցումներն իրականացվել են մեկ անգամ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման և մշակման գործընթացներն ապահովված չեն հստակ մեթոդաբանությամբ, իսկ իրականացված հարցումների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

Որակի ապահովման հիմնական գործընթացներում արտաքին շահակիցները (շրջանավարտներն ու գործատուները) ներգրավված չեն, և հստակեցված չեն նրանց դերակատարումը:

Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ձևավորման փուլում է, ըստ այդմ ՈԱ համակարգի մշտադիտարկում և գնահատում դեռևս չի իրականացվել: Միևնույն ժամանակ պարզ դարձավ, որ մշակված չեն համապատասխան ընթացակարգերն ու մեխանիզմները, որոնք կապահովեն գնահատման և բարելավման գործընթացները:

Քոլեջի կողմից ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնք, սակայն դեռևս չեն ամբողջականացրել որակի ներքին ապահովման համակարգը, բացակայում են ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշները:

Արտաքին գնահատման նպատակով ինստիտուցիոնալ մակարդակում տեղեկատվության հավաքագրման առաջին փորձը կատարվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ժամանակ:

ՄՈՒՀ–ը ինստիտուցիոնալ հավատարմագրման սահմանված չափանիշներով ներկայացրել է ինքնավերլուծությունը և փորձել է ապահովել համապատասխան հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չափանիշների պատասխանատուները լիարժեք տեղեկացված չէին իրենց չափանիշների վերաբերյալ: Ինքնավերլուծությունն իրականացնող հանձնախմբում ընդգրկված են եղել վարչական աշխատակիցներ, դասախոսներ, աշխատանքային խմբերում՝ նաև ուսանողներ: Ինքնավերլուծությունը հիմականում նկարագրական և ընդհանրական է, վերլուծությունները քիչ տեղ են գրավել, որը նախնական գնահատման ընթացքում թույլ չի տվել վերհանելու քոլեջի առանձնահատկությունը:

Ըստ ինքնավերլուծության՝ ՈԱ գործող քաղաքականությամբ կարևորվում է որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը:

Համաձայն որակի ապահովման քաղաքականության՝ քոլեջի որակի ապահովման համակարգի նպատակներից է ապահովել ՄՈՒՀ–ի գործունեության հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը: ՈԱ գործընթացների թափանցիկության արտահայտման միակ դեպքը հարցման արդյունքների քննարկումներն են մեթոդ-միավորումներում: Պետք է փաստել, որ բացակայում են ՈԱ գործընթացները հասանելի և հրապարակային դարձնելու մեխանիզմները: ՄՈՒՀ-ի կայքէջը դեռևս չի վերագործարկվում, իսկ ՈԱ գործընթացները չեն լուսաբանվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՕՀՊՄՔ-ն փորձում է ներդնել որակի ապահովման համակարգը, այդ նպատակով ներդրվել է ՈԱ քաղաքականությունը, մի շարք ընթացակարգեր և հաստիք, այուամենայնիվ մշակված փաստաթղթերը դեռևս տեսական մակարդակում են և իրենց լիարժեք կիրառությունը չեն գտել, որը վտանգում է ՈԱ համակարգի կայացումը:

Որակի ապահովման գործընթացների ոչ ճիշտ ընկալումը ներքին շահակիցների շրջանում կարող է հանգեցնել նրան, որ որակի մշակույթը քոլեջում իր տարածումը չի գտնի: Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՈԱ պատասխանատուն մասնակցի վերապատրաստումների, ձեռք բերի համապատասխան գիտելիքներ և փորձ ՈԱ գործընթացների վերաբերյալ՝ հետագայում տարածելով նաև քոլեջի ներքին և արտաքին շահակիցների շրջանում:

Տվյալների հավաքագրման մեխանիզմները քոլեջում հստակ չեն գործում, իսկ հավաքագրված տվյալները լիարժեքորեն չեն վերլուծվում, որը կարող է վտանգել օբյեկտիվ տվյալների հիման վրա որոշումների կայացումը:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ ԵՕՀՊՄՔ-ում ՊԻԳԲ շրջափուլը լիարժեքորեն չի գործում, հիմնականում բացակայում են գնահատման և բարելավման գործընթացների իրականացման մեխանիզմները, որը կարող է խոչընդոտել թերությունների բացահայումը, թիրախային և համակարգային բարելավումների իրականացումը:

Թեև ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացվել է համապատասխան ձևաչափով, սակայն չափանիշներում եղած տեղեկատվությունը ոչ միշտ է թույլ տվել պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի գործունեության արդյունքների վերլուծությունների և որակի ապահովման ներքին գնահատումների բացակայությունը չեն ապահովում ԵՕՀՊՄՔ–ի գործընթացների որակի մասին տեղեկատվության թափանցիկությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի հիմնականում նոր ներդրված լինելը, ներքին և արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին, որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը, տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև քոլեջի գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության ոչ բավարար հասանելիությունը, փորձագիտական խումբը եզրակացում է, որ ԵՕՀՊՄՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հովհաննես Երիցյան

Փորձագիտական խմբի ղեկավար

25 նոյեմբերի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հովհաննես Երիցյան՝ 2010թ. ավարտել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի «Առևտուր և մարքեթինգ» մագիստրոսական ծրագիրը: 2012-2016թթ. եղել է հայցորդ Եվրոպական համասարանի կառավարման ֆակուլտետում: Տնտեսական գիտությունների թեկնածու է: 2018թ. օգոստոս – 2020թ. հուլիս եղել է ARARAT կոնյակների բրենդ մենեջերը: 2021թ. Եվրոպական համալսարանում զբաղեցրել է Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի վարիչի և գիտքարտուղարի պաշտոնը: 2014թ.-ից մինչ օրս աշխատում է Եվրոպական համլսարանում որպես դասախոս: Ավելի քան 18 մասնագիտական հոդվածների և ուսումնամեթոդական ձեռնարկների հեղինակ է: Մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների: 2021թ.-ից մինչ օրս Միջազգային բիզնես դպրոցի գործադիր տնօրենն է:

Ասյա Սիմոնյան՝ 2013թ. ավարտել է Գյումրու պետական մանկացարժական համալսարանի (ԳՊՄԻ) «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մագիստրոսական ծրագիրը: 2013-2017թթ. եղել է ԳՊՄԻ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» կրթական ծրագրի ասպիրանտ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2017թ. մինչ օրս Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի դասախոս է: 2017թ. մինչ օրս Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում գեղարվեստական մարմնարզության մարզիչ մանկավարժ է: 2017-2021թթ., 2022-2024թթ. Օլիմպիական ցիկլերի գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար է: ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդի անդամ է: ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետ է: Մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների: 11 գիտական հոդվածների հեղինակ է:

Գոհար Մուրադյան՝ 2008թ.-ին ավարտել է ICFj միջազգային լրագրության մագիստրոսական կրթական ծրագիրը USAID-ի հետ համատեղ: Մասնակցել է մի շարք տեղական և միջազգային մասնագիտական վերապատրաստումների: 2008-2010թ. եղել է «Երկիր մեդիա» հեռուստաընկերության «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հեռուստալրագրող: 2019թ.-ից մինչ օրս Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) Որակի ապահովման բաժնի ղեկավարն է, միևնույն ժամանակ 2011թ.-ից նույն բուհի Մարզական լրագրության ամբիոնի դասախոս է, իսկ 2019թ.-ից՝ «Սպորտի մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի հայցորդ: 2022թ. մասնակցել է Erasmus+-ի 2 դրամաշնորհային ծրագրերի:

Էրիկ Գյոզալյան՝ 2011-2020թթ. սովորել է «Մակսեդան» օտար լեզուների դպրոցում: Ուսումնառություն է ստանում Երևանի հենակետային բժշկական քոլեջում, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության 3-րդ կուրսում է: 2022թ-ից կամավոր է «YES Armenia» կազմակերպությունում, նույն թվականից մասնակցում է Երևանի պետական բժշկական համլսարանի կողմից կազմակերպված «Բժշկի ուղի» ծրագրին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

№	06.09.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քելեջի փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած աշխատանքային խմբի հետ (10-12 հոգի)	11:50	12:40	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի անդամների հետ	14:00	14:50	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	15:00	16:00	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	16:10	17:10	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

№	07.09.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում բաժնի վարիչների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	10:30	11:30	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում, այց ստորաբաժանումներ	11:40	13:00	80 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:20	15:10	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ստորաբաժանումների աշխատակիցների հետ (Արտաքին համագործակցության և հասարկայնության բաժին, պրակտիկայի վարիչ, կարիերայի պատասխանատու, հաշվապահ)	15:20	16:20	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	19:00	160 րոպե

№	08.09.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Մարզումների դիտարկում	09:00	10:00	60րոպե
2.	Մասնագիտական հանդիպում «Ֆիզիկակիան կուլտուրա և սպորտ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսական կազմի հետ	10:15	11:25	70 րոպե
3.	Մասնագիտական հանդիպում «Ֆիզիկակիան կուլտուրա և սպորտ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ (10-12 հոգի)	14:20	16:00	40 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	16:10	16:50	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	19:00	120 րոպե

№	09.09.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Դասալսումներ	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:40	17:00	200 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ և փորձագիտական այցի ամփոփում	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Վերջին 3 տարիների տնօրենի տարեկան հաշվետվություններ	2
2.	Մանկավարժական և մարզչական խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
3.	Ստորաբաժանումների տարեկան և կիսամյակին պլաններ և հաշվետվություններ/վերջին 3 տարիների/	2
4.	ԵՕՀՄՊ աշխատակիցների էթիկայի և վարքագծի կանոնակարգի խախտման դեպքերի արձանագրություններ (եթե առկա են)	2
5.	Բոլոր հաստիքների համար մշակված պաշտոնի անձնագրեր	2
6.	Հաստիքացուցակ վերջին 3 տարիների	2
7.	Կազմակերպական նոր կառուցվածք	2
8.	«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ (ամբողջական), Մոդուլների կամ առարկաների ծրագրեր, թեմատիկ պլաններ	3
9.	«Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտությունների» դասընթացի ծրագիր, առաջադրանքների նմուշների, ուսանողների կողմից կատարված և գնահատված առաջադրանքներ	3
10.	Ռեֆերատների թեմաներ, կատարված ռեֆերետաների օրինակներ	3
11.	Նոր ներդրված կրթական ծրագիր	3
12.	Պրակտիկայի ծրագրեր, պրակտիկայի վայրեր	3
13.	Ուսանողներին տրվող առաջադրանքներ/ անհատական, խմբային, թեստային/	3
14.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվություն /վերջին 3 տարիների/	3
15.	Շրջանավարտների զբաղվածության բազա	4
16.	Ընդունելության քննությունների հարցաշարեր	4
17.	Ընդունելության ներքին իրավական ակտեր	4
18.	Վիճակագրություն ընդունվող ուսանողների և հեռացված ուսանողների (վերջին 3 տարիների)	4
19.	Խորհուրդների նիստերի արձանագրություններ ընդունելության արդյունքների քննարկման վերաբերյալ	4
20.	Կարգավարների կատարած աշխատանքների հաշվետվություն (վերլուծություն -)	4
21.	ՈՒԽ նիստերի արձանագրություններ, աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	4

22.	Դասախոսական կազմի ընդունելության պահանջներ /հիմնական մասնագիտական և մանկավարժական որակներ, որոնք հաշվի են առնում ընդունելության ժամանակ/	5
23.	Դասախոսի ընդունելության մրցույթի արդյունքների արձանագրություններ	5
24.	Տնօրենի վարչատնտեսական գծով տեղակալի հաշվետվություններ	5
25.	Դասալսումների արդյունքների քննարկման արձանագրություններ	5
26.	Բաժինների հաշվետվություններ (վերջին 3 տարվա համար)	5
27.	Մանկավարժական խորհրդի հաշվետվություններ (վերջին 3 տարվա համար)	5
28.	Դասախոսի գնահատման հարցումների արդյունքների վերլուծություններ	5
29.	Քոլեջի անձնակազմի խրախուսման քաղաքականություն	5
30.	Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի արդյունավետության գնահատման ընթացակարգ (նախագծային)	5
31.	Հաշվետվության և աշխատանքային պլանների օրինակներ	5
32.	Վերապատրաստումների ծրագիր, մասնակիցների գոհունակության գնահատում	6
33.	Հետազոտական աշխատանքների՝ ռեֆերատների, անհատական ինքնուրույն աշխատանքների օրինակներ	6
34.	ֆինանսական կառավարման քաղաքականություն (առկայության դեպքում)	7
35.	Բյուջեի նախահաշիվներ (վերջին 3 տավա համար)	7
36.	Ընդհանուր բաժնի հաշվետվություն	7
37.	2021-2022 ուստարվա ուսանողների շրջանում ռեսուրսներից բավարարվածության հարցումների արդյունքների վերլոծություն	7
38.	ՄՈՒՀ-ի վերաբերյալ մամուլի հրապարակումների հղումներ	8
39.	Մարզական հաջողությունների մեդիա հրապարակումների, հանրային արձագանքի մշտադիտակումների արդյունքներ	8
40.	Համագործակցության պայմանագրեր գործընկերների և տեղական կառույցների հետ	9
41.	Օտար լեզվի վերապատրաստման դասընթացի ծրագիր–ժամանակացույց	9
42.	Մրցումների պլան ժամանակացույցը վերջին 5 տարիների	9
43.	Քոլեջի կողմից կազմակերպված միջազգային մրցումների ցանկը	9

44.	Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ /կցվախ է եղել ԻՎ-ին, սակայն չի բացվել/	9
45.	ՈԱ բաժնի աշխատանքային պլան	10
46.	ՈԱ կենտրոնի փորձագետի պաշտոնաի անձագիր	10
47.	Հարցումների կանոնակարգ, հարցաթերթիկի օրինակ, ձեռքբերված տվյալների վերլուծություններ	10
48.	ՄԿԾ աաշխատախմբի արձանագրություններ	10
49.	Շահակիցների հետ իրականացվող բոլոր հարցումների հարցաթերթերը և վերլուծությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսանողական հանրակացարան (սենյակներ, մերսման սրահ, մեկուսարան, լվացքատուն և այլն),
2. Քոլեջի պատմության թանգարան,
3. Նիստերի դահլիճ,
4. Հանդիսությունների դահլիճ,
5. Ճաշարան,
6. Մարզադահլիճներ (հունահռոմեական , ձյուդո, սամբո, բոցքամարտ, ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության, ծանրամարտ)
7. Մարզադաշտեր (թենիս, ֆոտբոլ)
8. Հանդերձարաններ,
9. Բուժկետեր,
10. Գրադարան,
11. Լսարաններ,
12. Ամֆիթատրոն:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԵՕՀՊՄՔ	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ
ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
ՌԾ	Ռազմավարական ծրագիր
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
ՀԽՍՀ	Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀՖԿՍՊԻ	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԳԱՑ	Գնահատման առանցքային ցուցանիշներ
ԿԽ	Կառավարման խորհուրդ
ՈՒԽ	Ուսանողական խորհուրդ